



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1884 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Զ.

6 ՅՈՒՆԻՍ 1884



Կ. ՊՕԼԵՄ

1884

ԴԻԻԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԳԻԻԱՆ

Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան	Ա. Արեւոյե
Քրիստոստուր » Ղազարոսեան	Բ. »
Յովհաննէս » Թորոսեան	Գ. »
Յովհաննէս » Արշակունի	Ա. Արեւոյե
Յակոբ » Պօլնակեան	Բ. »



Ձեռնաստրեան Դիւան

Մատթէոս Եսկ. Իգլիլեան Արեւոյե
Գարեգին Վրդ. Թաթարեան
Մարկոս Էֆէնտի Աղարէգեանց

Դաստիարակութեան Դիւան

Ռէթէոս Էֆ. Պէրպէրեան Արեւոյե
Գէորգ » Ապուլլահ
Միքայէլ » Մամիկոնեան

Կարուածոց Դիւան

Քրիստոս Էֆ. Ղազարոսեան Արեւոյե
Յակոբ » Եէմէնիճեան
Պօղոս » Թորգոմեան

Համարակալութեան Դիւան

Կարապետ Էֆ. Սըլահեան Արեւոյե
Մկրտիչ » Ճանրմեան
Գառնիկ » Յովակիմեան

Ցարաբերութեան Դիւան

Յովհաննէս Էֆ. Թորոսեան Արեւոյե
Ռուբէն » Պուրկուրեան
Վիլէն » Օրմանեան

Իրաստութեան Դիւան

Յովհաննէս Քչյ. Մկրեան
Յակոբ Էֆէնտի Արշակ
Գարրիէլ » Նորատունկեան

Նախաճեռութեան Դիւան

Մինաս Էֆէնտի Ձերաղ Արեւոյե
Յովհաննէս » Արշակունի
Նշան » Պօյաճեան

Խմբագրութեան Դիւան

Հարաթում Էֆէնտի Ալաճաճեան
Յակոբ » Գուրգէն
Կարապետ » Իւթիւճեան

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ

ԲԱՅՈՒՄՆ 1884 ՍՄԻ

Ն Ի Ս Տ Զ.

6 ՅՈՒԼԻՍ 1884

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Սիմէօն Եպիսկոպոս Սէֆէրեան (Առեւտր.)
ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան Էֆէնտի Երևուֆեան .

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- Ա. — Ատենական գործողութիւնք .
- Բ. — Շարունակութիւն վիճարանութեան ի վերայ Աղգային կեդր. Երևուստոյցի .
- Գ. — Առաջարկութիւն Աղգային Վարչութեան Խառն ժողովոյ ի մասին Առաջնորդական խնդրոյ .
- Դ. — Ընտրութիւն Գ. Ատենագարի Աղգային ժողովոյ .

Ատենագետ Էֆէնտի ատենան կը բանայ ժամ 2 1/2 ին 'ի ներկայութեան 35 Երեսօր. խանաց , որոց թիւն 'ի վերջէ 54 ի կը յանդի :

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա .

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԻՔ

1 .

Վաւերացումն Ե. նստի ատենագրութեան

Ատենագետ Էֆէնտի 'ի ղիտողութիւն կը հրաւիրէ զԵրեսօրխանն Ե. նստի ատենագրութեան վրայ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՏ — Ներկա, ատենագրութեան մէջ իմ խօսքերս խիստ համառօտած և միակամայն յառաջ բերած փաստերէս շատերն դրուած չ'լինելով , կատարկութիւնք անկատար մնացած են :

Երես 117, սիւնակ Ա. — Վարի կոտորին մէջ ըստած է , « Կրօնական ժողովն իրեն յատուկ « զիւան մ'ունի որոյ ամսական սահմանուած « է 1200 զը՝ և այլն » . մինչդեռ մենք ղիտողութիւն կընէինք և կը զանգատէինք թէ ' « Ել « մշտացոյցին մէջ Կրօնական ժողովոյ համար « բնաւ զիւան նշանակուած չ'է » : Նոյն երես , Բ. սիւնակին մէջ արձանագրուած է , « Երբ կը « տեսնեմք թէ Գաղ. ժողովոյ մի գրազիրն

« 1500—2000 զըշ. ամսական կ'ստանայ և
 « կրօն. ժողովոյ երկու բարտուղարք 600 զըշ,
 « մինչդեռ աշխատութիւն և արժանիք հասնա-
 « սար են, մտովին կը հարցնեմ թէ՛ ի՞նչ
 « տարբերութիւն կայ և այլն » որ սխալ է, զի
 « ես ըսած էի թէ՛ « երբ Քաղ. ժողովն իւր Գի-
 « ւանադպրին գոհացուցիչ ամսական կուտայ,
 « պէտք է գոհացնել նաև կրօն. ժողովոյ Գի-
 « ւանադպրին և այլն » : 119 Երեսի խօսքերս
 շիտթուած են և շատ համառօտուած : Ես քա-
 հանայից մէջ պատուաւոր զարտուղութիւններ
 նշանակած էի : Երես 120. սիւնակ Ա. խօս-
 քերս այնքան համառօտուած են որ կարելի չէ
 ըմբռնել թէ՛ կրօնական ժողովն ինչո՞ւ 500
 ոսկոյ դումար մը կը պահանջէ իւր տրամա-
 դրութեան ներքև :

Համառօտութիւնն խիստ անախորժ ար-
 պաւորութիւն կընէ յիս, ուստի պիտի խընդ-
 րեմ Գիւանէն որ այս տեսակ ընդարձակ և
 կարևոր ատենախօսութիւնք, յառաջ բան ըջ
 տպագրութիւն դէժ մի անդամ ցոյց տրուին
 ատենախօսից, որպէս սովորութիւն է ընել
 ուրիշ ազգաց մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ի պատասխանի Գեր-
 Խորէն Սրբազանի զխտղութեանց կը պարտա-
 ւորիմ յայտնել թէ՛ այնքա՞ն ընդմիջումներով
 եղած ատենաբանութիւն մը, մասնուանդ տ-
 ուանց սրագրութեան, կարելի չէ ճիշտ ու ճիշտ
 և բառ առ բառ արձանագրել : Բաւական է որ
 ատենաբաններու խօսից իմաստն ու ոգին պահ-
 ուած ըլլան, և Գիւանս չ'կարծեր որ Նորին Սըր-
 բազնութեան խօսից իմաստն այդ աստիճան
 այլալուծած լինի որպէս կ'ենթադրէ :

Իսկ գալով Նորին Սրբազնութեան այն ա-
 ուջարիութեան թէ՛ լաւ է որ ատենաբանից
 կողմանէ եղած կարևոր խօսքերն զէժ մի ան-
 զամ ցոյց տրուին իրենց, կը փութամ յայ-
 տարարել թէ՛ արդէն իսկ Գիւանս ընդունած է
 այդ սովորութիւնն և յանձնարարած իւր Գի-
 ւանադպրին որ երբ Երեւոյնի տեսնել ու-

ղեն իրենց խօսքերն, ցոյց տայ. անշուշտ Նո-
 րին Սրբազնութեան կողմանէ այդ պահանջու-
 մը եղած չէ, որպէս զի ատենագրութիւնն կա-
 րենար իրեն ներկայանալ յառաջ բան զըջ-
 պագրութիւն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Երես 94. Սիւ-
 նակ Բ. — Անցեալ նստին մէջ Չորրորդ նստի
 ատենագրութեան վաւերացման սրահուն զի-
 տղութիւն ըրի և ըրի թէ՛ « ժողովոյ նիստերն
 « ասկից առաջ ստաւօտներն ալ կ'ըլլար » պի-
 տի լինի, բայց կը տեսնեմ թէ՛ դարձեալ նոյն
 կերպիւ արձանագրուած է, ուստի կը խընդ-
 րեմ որ ճշգրտի և ոչ ին տեղ ալ դրուի :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ներկայ ատենա-
 գրութեան Ա. երեսի Բ. սիւնակի մէջ Չերազ
 Մինաս Էֆէնտի երբ զիս ընդմիջելով ըսաւ թէ՛
 « մի քիչ քիչ և ոչ քիչ կոյր, որստասխանեցի
 թէ՛ ես իմ գործածած բառս կը յիշեմ, այս
 պատասխանս չէ նշանակուած :

Երես 106. Բ. սիւնակ — Խօսքս պիտի ըլ-
 ւոյ « այդ միջոցներն ցոյց տրուած են Համա-
 ըրակալութեան Գիւանի Ա. Տեղեկագրին մէջ » :

Երես 108. սիւնակ Բ. « թող դժուարա-
 « գանձելի գումարներն պաշտօնէից յատկա-
 « ցուին » պիտի ըլլայ « դժուարագանձելի գու-
 « մարներն քիչ մ'ալ թող պաշտօնէից յատկա-
 « ցուին » նոյնպէս 'ի պատասխանի Չօգանեստն
 Էֆէնտի ըրի — « դաստիարակութիւնը բերան
 չ'ունենալուն համար կը զրկուի ուրեմն » :

ՉՊԱՆԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենուպետ Էֆէն-
 տի, կարծեմ թէ՛ երեւոյնի տարբ. միմիայն իրենց
 խօսքերն ուղղելու իրաւունք ունին և ոչ թէ
 այլոյ խօսքերն ալ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նս միայն իմ խօս-
 քերս ուղղեցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս բիչ մը առաջ
յայտնեցի, առանց սղագրութեան չ'է կարելի
Ատենաբանի մէն մի խօսքերն ամբողջապէս
ործանազրել, բաւական է որ իմաստներն չ'այ-
այլին ու չ'փոխուին, և կը խնդրեմ Կրեափո-
խան էֆէնտիներէն որ այդ տեսակ փոքր զի-
տողութիւններով չ'ծանրանան Դիւանին վիայ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենագրութիւնք
ժողովոյ գործառնութեանց պատկերն են և ջա-
նալու է ըստ կարի ճիշդ խմբագրել զանոնք,
վասնդի Դիւանն է պատասխանատու:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ընդհանուր զի-
տողութիւն մ'ունիմ Ատենապետ էֆէնտի:
Բաւական տառական սխալներ սարգած են ա-
տենագրութեան մէջ, կը խնդրեմ որ այս բա-
նիս բիչ մ'աւելի ուշադրութիւն լինի:

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Ինչպէս որ բանիցս
յայտարարած եմ, դարձեալ կուգամ յայտնել
թէ՛ տղագրական փորձերն են անձամբ կը նա-
յիմ և ապա երկու փորձերէ ալ կ'անցնին ա-
նոնք, սակայն և այնպէս եղած սրբագրու-
թիւններն անփոփոխ կը մնան մեր գրաւարաց
անուշադրութեան շնորհիւ: Զեռագրերն կըր-
նան հաստատել զայս: (Առ Ղազարոսեան Է-
Ֆեմոյի) Այս առթիւ սա ևս կը յաւելում թէ
որչա՞ծ էինք Ձեզ հետ միանալ և մասնաւո-
րաբար տպագրական խնդրոյն կարգադրման և
ժողովոյն ներքին բարեկարգութեան մասին
խորհրդակցել, բայց տակաւին այդ որոշումը
չը կրցաւ իրականանալ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Իմ ըսածս այդ
չ'է: Ես կը փափաքեմ որ տտենագրութեան
տառական սխալներուն բիչ մ'աւելի ուշադրու-
թիւն ընծայուի:

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Բոց Տպագրիչն ևս
չ'եմ ընտրած:

Ուրիշ զիտողութիւն ունեցող չ'լինելով,
Ատենապետ էֆէնտի ժողովոյ ընդունելութեան
կ'ենթարկէ Ե. նստի ատենագրութիւնն որ ԵՂ.
Վ.Ա.Ի.Բ.Է. հանդերձ եղած զիտողութեամբ:

2.

Բացակայութիւնք

Ատենապետ էֆէնտի յայտնելով թէ Ե.
բեսփոխաններէն Տ. Գրիգոր Քհչ. Աճէմեան
անձնական տկարութեան, Յովնանիչս էֆէն-
տի Ազնաւորեան ճամբորդութեան, և Պօղոս Է-
ֆէնտի Թորգոմեան տան մէջ հիւանդ ընե-
նարուն պատճառաւ այս աւուր ժողովոյ նիս-
տէն բայցակոյ մնալին զրով հաղորդած են
Դիւանին, իբր օրինաւոր բացակայք՝ նշանակել
կ'ուտայ նոցա անուանքն ՚ի տուժարի ներկա-
յութեան:

3.

Հրածարագիւր ՚ի երեսփոխանութենէ Տ.
ԷՖեմոյի Թիրեաբեանի.

Յարութիւն էֆէնտի Թիրեաբեան իւր Ե-
րեսփոխանական պաշտօնէն հրածարին հետե-
եալ զրով ծանուցած լինելով Դիւանին, Ատե-
նադպիր էֆէնտի կ'ընթեանու զայն:

Վսեմ. Ատենապետ էֆ. Ազգային
Պատկառելի ժողովոյ.

Տեսնելով որ անհնար պիտի լինի
ինձ, զբաղմանցս պատճառաւ, յաճա-
խել կ'անձնաւորապէս ՚ի նիստ Պատկ.
ժողովոյդ կամ մասնակցել այլ կարեւոր
աշխատութեանց, միով բանիւ խղճի մը-
տօք կատարել իմ երեսփոխանական
պարտաւորութիւններս, կուգամ մա-

տուցանել հրաժարականս և խնդրել որ հաճի Պատկ. Ժողովը ընդունիլ զայն ընդ նմին և խորին յարգանացս և մեծարանացս հաւատիրքն :

Յ. Թիրեաբեան

6 Յուլիս 1884

Կէտիր-Փաշա

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Սոյն հրաժարագրին վրայ դիտողութիւն ունեցող կայ :

ՀԱՆՐԱՅԵԱՆ Մ. ԷՅ. — Կ'առաջարկեմ որ իր պարզ հրաժարականս, անմիջապէս բուէի դրուի :

Երեսփոխաններէն ոչ որ դիտողութիւն ընելով, Ատենապետ Էֆէնտի բուէի կը դնէ սոյն պարզ հրաժարականն զոր կ'ընդունի ժողովն 6 բուէի դէմ միաձայնութեամբ :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՅ. — Կը խնդրեմ Դիւանէն որ հաճի մեզ տեղեկութիւն տալ թէ՛ վերջին նստին մէջ եղած որոշման մը համաձայն՝ ժողովս երեք բացակայութիւն ունեցող երեսփոխանաց վերջնադրեր զրկուած են թէ ոչ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Գուրգէն Էֆէնտի եթէ չ'աճապարէ, ժողովոյս աւարտման միջոցին պիտի լսէ բացակայ երեսփոխանաց մասին օրինական գործողութեանց տեղեկութիւններն, ինչպէս որ կանոնադիրը կը պահանջէ :

4.

Պաշտօնագիր Ազգային-Վարչութեան Խառն Ժողովոյ յողագս երուսաղիմայ պարտուց բարձման խնդրոյն .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Մեր ատենական գործողութեանց կարգին մէջ ունիմք Քաղաքական

Ժողովոյ մի պաշտօնագիրն հանդերձ Խառն Ժողովոյ մի այլ տեղեկագրով, որ կը վերաբերին երուսաղիմայ պարտուց բարձման ծանօթ խնդրոյն : Ուստի Օրակարգի Բ. Խնդրոյն անցնելէ յառաջ, կը փութամ սոյն պաշտօնագիրն յանձնել ժողովոյը ուշադրութեան :

Ձայս տեսլով, Ատենապետ Էֆէնտի կը հրաւրէ զԱտենապետը Էֆէնտի ընթեանու Քաղ. Ժողովոյ պաշտօնագիրն :

Վսեմափայլ Ատենապետ Էֆէնտի Ազգային Երեսփոխանական Ժողովոյ .

Ընդ զրոյս կը հաղորդեմ Ձեր Վրասեմութեան Խառն Ժողովոյ մէկ տեղեկագիրն, որ կը վերաբերի երուսաղէմի պարտուց բարձման մասին Բ. Դրան ընդունած վերջին անօրէնութեան : Ինչպէս պիտի տեսնէք սոյն տեղեկագրէն, խնդրը ստիպողական է և փափուկ, ուստի պիտի խնդրեմ որ հաճիք Ազգային Ժողովոյ յաստիքիայ նստի Օրակարգին մէջ նախադասել զայն, իր ստիպողական քան զամենայն խնդիր, և միաժամայն պէտք եղածը անօրինէք, որպէս զի դռնփակ տեղի ունենայ նիստը :

Մ'նամ յարգանք

Ի դիմաց Քաղաքական Ժողովոյ

Ատենապետ

Ս. Մարտոսեան

4 Յուլիս 1884

(Յե՛ր ընթերցե՛՛ք)

Յ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՏ — (Ատենապետ կրօնական ժողովոյ) Օրինական դիտողութիւն մ'ունիմ Ատենապետ Էֆէնտի : — Ըստի թէ Վարչութեան կողմանէ տեղեկագիր

մը եկած է ։ Ժակայն կը տեսնեմ որ կարգա-
ցուած այդ պաշտօնագիրն միմիայն Քաղաքա-
կան ժողովոյ Ատենապետ Պէյրի ստորագրու-
թիւնն կը կրէ ։

Կրօնական ժողովն մասն է վարչութեան ,
և երբ կ'ընեմք Ազգային վարդաբխին , պէտք
է հասկնալ Կրօնական և Քաղաքական ժողով-
ներն միանգամայն ։ Կը խնդրեմ որ այդ սխալն
չ'իրկնուի ուրիշ անգամ և միանգամ ընդ միշտ
ճշգրտի այդ բառին նշանակութիւնն , մանա-
ւանդ երբ խնդիրն ուղղակի Ազգային Բարձրա-
րագոյն ժողովին կը ներկայանայ ։

ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԵՅ . (Ատենապետ Քաղա-
քական ժողովոյ) Տեղեկագիրն Խառն ժողովոյ
կողմանէ խմբագրեալ և ստորագրեալ է , իսկ
կարգացուած պաշտօնագիրն որ իւր մէջ ինչ
ինչ քաղաքական կէտեր կը պարունակէ , Քա-
ղաքական ժողովն հարկ տեսած է ինքն միայն
ստորագրել և իւր վրայ առնուլ պատասխա-
նատուութիւնն ։

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Խորէն Սրբա-
զան իրաւունք ունի ։ — Երբ Ազգային վարչու-
թիւն կ'ընեմք , Կրօնական և Քաղաքական ժո-
ղովներն միանգամայն կը հասկնամք , ուստի երբ
ո և է գիր մը կը ներկայանայ յ'առնու Խառն
ժողովոյ , պէտք է այդ երկու մարմնոց ստորա-
գրութիւնքն միանգամայն կրնն ։ Թէ և վերջի
նախին մէջ Եւմուսոյցոյ խնդրոյն առթիւ , Կը-
րօնական ժողովոյ Ատենապետ Սրբազանի կող-
մանէ եղած դիտողութիւնք իրաւացի չէին ,
զի Եւմուսոյցոյ խնդիրն ուղղակի Ազգ. վար-
չութեան Քաղաքական ժողովին կը պատկանի
և ոչ Խառն ժողովին ։

ՍԵՎԱԶՅԵԱՆ Կ. ԷՖ. — Փասն և չորս տա-
րիներէ 'ի վեր է որ վարչութեանց կողմանէ
հոս շարունակ թղթեր կուզան և այս առաջին
անգամն է որ Սրբազան շոր կողմանէ դիտա-
ղութիւնք տեղի կ'ունենան ։

Ելլածն պարզապէս սխալանցման խնդիր
մ'է և առ այս՝ Քաղաքական ժողովոյ Ատենա-
պետ Պէյրի կողմանէ արուած բացատրութիւնք
զուցողօրցի է ։

Այս առթիւ պիտի խնդրեմ վարչութե-
անն որ ժողովն այն օրինակ իրաւատութեան
խնդրովք ժամովաճառ չ'ընելու համար , նախ
ինքն իւր մէջ համաձայնի , եթէ իրօք անհա-
մաձայնութիւն կայ , և ապա հոս բերէ իրեն
զիրենքն ։

Տ. Մ. ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Երբէք չեմ
կրնար ընդունիլ Սըվաճեան Էֆէնտիի այն
խօսքն թէ՛ « եթէ անհամաձայնութիւն կայ ,
թող նախ համաձայնին լրինեց մէջ » ։ վար-
չութիւնն իւր մէջ բնաւ ո և է անհամաձայնու-
թիւն մը չ'ունի ։

Փառլոլ բառին ճշգրտան խնդրոյն , 1860 էն 'ի
վեր վարչութեանց կողմանէ հոս եկած պաշտո-
նագրերն երբեմն այսպէս և երբեմն այնպէս
կ'ստորագրուէին , իսկ այժմ Կրօն. ժողովոյ Ա-
տենապետ Սրբազանն իտիպաք կը յայտնէ որ
այդ բառն մի անգամ ընդ միշտ ճշգրտելով իւր
բուն նշանակութեամբն առնուի , և կարծեմք
այս նշանական դիտողութեան դէմ ս'չ'որ կըր-
նայ առարկութիւն մ'ընել ։

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ըսե՛լ է , եղած գոր-
ծողութեան մէջ մասնաւոր դիտում մը չ'կայ ։

Տ. Մ. ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Բնա՛ւ ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ազգային վարչու-
թիւնը կը բաղկանայ Կրօնական և Քաղաքական
ժողովներէն , բայց երբ լսի Ազգային վարչու-
թիւն կ'ընեմք , չ'հետեւիր որ Կրօնական ժո-
ղովն իւր Սահմանադրական շրջանն զուրս
կ'էնէ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐՊԵՅ. — (Ընդ-
միջելով) Ընդհակառակն բոլորովին կը ընջուի
Կրօնական ժողովն ։

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Չեմք կրնար այդպէս ըմբռնել. երբ կ'ըսեմք « Ազգային Վարչութեան կողմանէ » կը հասկնամք նաև Վարչութեան ճիշդերէն միայն կողմանէ եկած , ինչպէս որ քիչ մը առաջ յայտարարեցի թէ՛ Վարչութեան կողմանէ տեղեկագիր մը ներկայացուած և անոր կցուած է Բաղարքական Ժողովոյ պաշտօնագիրն :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Բայց Քաղաքական և Կրօնական Ժողովներն իբրև ճիշդեր նկատեցիք, Ատենայեա Էֆէնտի, որ սխալ է :

(Աղմուկը եւ շփոթութիւնը)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ի ճայն զանգակի բարեկարգութիւնն վերահաստատելով) Եթէ բառերու հետ խաղամք , մինչև երեկոյ չեմք կրնար վիճարանութիւնն վերջացնել : Ուստի կը խնդրեմ որ մէկ կողմ՝ զձեզով բառերն , զխտատրութիւննիս ճշդեմք :

Այսօր Կրօն. և Քաղ. Ժողովներէն համախումբ մի տեղեկագիր ներկայացած է Ժողովիս հանդերձ Քաղաքական Ժողովոյ մի սյլ պաշտօնագրովն , որով կուզայ ստիպողականութիւն տալ խնդրոյն : Բայց ըստ որում միայն երէկ երեկոյ ձեռքս հասաւ սոյն զիրն , հետեւաբար չ'էի կրնար մեր օրակարգին մէջ դասակարգել զայն : Ահա ասոր վրայ է լարնդիրն :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍԿ. ՆԱՐ-ՊԷՏ. — Խօսք կ'ուզեմ Ատենայեա Էֆէնտի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդէն 'ի Դիւանէ սէտք եղած յայտարարութիւնն ըրի , ուստի սյլ եւս չեմ կարող խօսք տալ այս խնդրոյն վրայ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍԿ. ՆԱՐ-ՊԷՏ. — Ի՛նչ ըսելէ է . իրաւունքս է և սլտի խօսիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Առ Տ. Խորեն Սրբաբազան) Քաղաքական Ժողովոյ Ատենայեա պէյն Չեր Սրբազնութեան կողմանէ յարուցող իրաւատութեան կէտին վրայ հարկ եղած գոհացուցիչ բացատրութիւնն տուաւ , ուստի կը խնդրեմ որ վերստին 'ի խնդիր չ'ձմանէք :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍԿ ՆԱՐ-ՊԷՏ. — Տըրուած այդ բացատրութիւնն անգամ մ'ուղ 'ի Դիւանէ յայտարարեցէք , Ատենայեա էֆէնտի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը յայտարարեմ թէ Վարչութեան անուան տակ կը հասկնամք Կրօնական և Քաղաքական Ժողովներն միանգամայն և ասոր հակառակն ըսող ընտւ չ'կայ :

(Ի Դիւանէ եղած այն յայտարարութեան վրայ , Կրօն. Ժողովոյ Ատենայեա Սրբազանն դէպ 'ի Դիւանն յառաջանելով , ինքն ալ կը ստորադրէ Քաղաքական Ժողովոյ կողմանէ ներկայեցեալ պաշտօնագիրն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնական դիտարութեան մը համար խօսք կուղեմ : — Վարչութեան կողմանէ ներկայացեալ սոյն խնդրոյն ստիպողականութիւն տալ կ'առաջարկէ Քաղաքական Ժողովն : Սակայն մեր ներքին Կանոնադրի 65 և 59-րդ յօդուածոց տրամադրութիւններն (կ'ընթերնու) կը պարտաւորեն զժողովս , որ նախ խնդիրն իր օրինական նախարանութեանն անցնի և սոյա ենթարկի վիճարանութեան մինչևև խի եթէ ստիպողութիւն տրուի :

Բարով բուն խնդրոյն , կը յիշէ Պատկ. Ժողովի թէ Երուսաղիմայ պարտուց բարձման համար զինչերական տրուց վրայ 3 զըլի. յաւելման խնդրոյն առթիւ ասկից առաջ այս Ժողովոյ մէջ հարցում եղած լինելով , Բննիչ Յանձնաժողով մը կազմուած էր որ Վարչութեան հետ Խառն ճիտ ընելով ըննէ այդ խնդիրը և կամ համաձայնութեամբ և կամ առանձինն բե-

րէ իւր տեղեկագիրը • րայց երր Վարչութեան Ատենապետ Պէյն յայտարարեց Յանձնաժողովոյն մէջ թէ կայսր կառավարութեան այդ մասին պատասխան առնուած չէ, և յոյս ալ չկայ առնելու, ուստի այժմէն ստով զբաղելու տեղի չկայ, Յանձնաժողովն ալ այդ մասին բնութիւն չընելով, Երուսաղիմաց պարտուց բարձման համար Ազգային հանդանակութեան առաջարկ մը բերաւ ժողովն, որ զայն ընդունեց և յանձնարարեց Վարչութեան 'ի գործադրութիւն: Վարչութիւնը ժողովոյս այդ որոշումը յայտագրեց կայսր կառավարութեան, և կառավարութիւնն այս անգամ կը ծանուցանէ թէ զինտեսարական տրոյց վրայ յաւելումն ընդունուած է:

Այժմ որ կառավարութիւնն ընդունած է սոյն Յ զրէի յաւելումը, բանաւոր է և օրինակին որ նոյն ֆինիչ Յանձնաժողովը, ըստ նախկին որոշման ժողովոյդ, Վարչութեան հետ միասին նախ խնդիրն ուսումնարկէ և տեղեկագիր մը բերէ:

ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԵՅ . — (Ատենապետ Բաղ. Ժողովոյ) Փախազեան էֆէնտիի զխոսուածութիւնքն իրաւացի են: Թէ և Երուսաղիմաց Վանուց վիճակն յայտնի է, հետեւաբար խնդիրն ստիպողական և փախուկ, սակայն ես ալ կը ընդունիմ որ խնդրոյն նախաբնութիւնն յանձնուի յիշեալ ֆինիչ Յանձնաժողովին որ Վարչութեան հետ խառն յիստ մը ընէ և իւր բռնութեանց արդիւնքն տասնեւհինգ օրեսոյ սոյն մասնաժամուս ներկայէ Պատկառելի ժողովոյդ 'ի դռնիակ նիստ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Բանի որ Վարչութեան Ատենապետ Պէյն համաձիտ է եղած առաջարկութեան, ուստի ըստ օրինի նախ խնդրոյն ստիպողականութիւնն ժողովոյդ բնութիւն կ'ենթարկեմ յառաջիկայ նստին համար:

Զայս ասելով, Ատենապետ էֆէնտի ժո.

ղովց քուէին կ'ենթարկէ խնդրոյն ստիպողականութիւնն որ կ'ընդունի միաձայնութեամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Գաղով յղման կէտին, Փախազեան էֆէնտի կ'առաջարկէ խնդրոյն նախաբնութիւնն յանձնել սակից յառաջ ժողովոյս կողմանէ կարգեալ ֆինիչ Յանձնախումբին, որ Վարչութեան հետ համախորհուրդ 'իւր տեղեկագիրն բերէ հոս:

Արդեօր ժողովը կ'ընդունի՞ այս առաջարկութիւնն թէ չէ խնդիրն նախաբնիչ Գիւսնին յղել հարկ կը տեսնէ:

Տ. Մ. ԵՊՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ . — Յիշատակել ֆինիչ Յանձնաժողովն երկու անգամբ, Տ. Վահան վարդապետ և ես կրօնական ժողովց անդամ լինելով այժմ, ըստ օրինի չ'եմք կարող անդամակցիլ նաեւ նոյն Յանձնաժողովին, և հարկ է մեր տեղ նոր ընտրութիւն կատարել:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍԿ. ՆԱՐ-ՊԵՅ . — Ըստ իս, աւելի օրինաւոր է նոր ընտրութիւն կատարել:

ԹՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ . — Ի՞նչ պիտի ըլլայ այդ Յանձնաժողովին պաշտօնն:

ՓԱՔԱՋԵԱՆ Ս. ԷՖ . — Այդ մասին արդէն ժողովոյն նախորդ որոշումը կայ: — Ազգային ժողովն ընդունելով ֆինիչ Յանձնաժողովց տեղեկագիրն եզրակացութիւնն, որոշած էր սպտսել մինչեւ որ կայսերական կառավարութիւնն իւր կարծիքն յայտնէ: Ուստի, նոյն Յանձնաժողովց պաշտօնն պիտի լինի այժմ Վարչութեան հետ խնդիրն ուսումնասիրել և տեղեկագիր մը բերել հոս:

ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԵՅ . — Եւ ես այն ատեն առաջարկած էի թէ՛ երբ կայսերական կոտս.

վարութիւնը իւր հաւանութիւնն տայ, յայնժամ
կուգամբ բացատրել այս սկզբան օգուան կամ
մնասն, հետեւաբար լաւ է որ այսօր նոյն Յանձն-
նաժողովն Վարչութեան հետ վերադին դումա-
րի, լսէ անոր բացատրութիւններն և իւր տե-
սութիւնքն ներկայէ Պատ. Ժողովոյց :

ՅՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՅ. — Ինձ աւելի բանա-
ւոր կը թուի խնդիրն իրեն յատուկ Գիււանին
յղել. բայց եթէ կ'ուզուի մասնաւոր Յանձնա-
ժողովոյ մը յանձնել, աւելի լաւ է նախապէս
կազմուել Յանձնաժողովին յղել որով և սկա-
հած կ'ըլլամք մեր նախորդ որոշումն :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՅ. — Սակայն սլայմանու
որ տպեալ տեղեկագիրն գէթ երկու օր ա-
ռաջ երեսօթխանաց ձեռքն հասնի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Քանի որ Վարչութեան
Ատենապետ Պէյն ինչպէս և ոմանք յ'երես-
վոխնաժողովն, խնդրոյն նախարհութիւնն նոյն
Քննիչ Յանձնաժողովոյն յանձնելու կողմն են,
հարկ է որ հրոժարեալ երկու տեղամտոց տեղ
եւս նոր ընտրութիւն կատարեմք :

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՅ. — Նոր ընտրութեան
հարկ չ'կայ, հինգ հոգի բաւական է :

ՄԻՔԱՆԻ ՆՅԱՐԱՆՆԵՐԷ — Այո՛, հինգ
թիւն բաւական է :

ՋԵՐԱՋ Մ. ԷՅ. — Խնդրոյն բնութիւնը
նախորդ Յանձնաժողովոյ յանձնելու առաջար-
կին համեմատ չ'եմ ես, սա նկատուեալ որ
նոյն Յանձնաժողովն ընդգրկուողիւր կուսակցու-
թեանէն կազմուած է : Հետեւաբար կ'առաջար-
կեմ մի նոր Յանձնախումբ ընտրել յ'որում
դատուին երկու կուսակցութեանէն ալ հաւա-
սար թուով անդամներ :

ՓԱՍԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Կ'ըստի թէ նախորդ
Յանձնաժողովն ընդգրկուողիւր կուսակցութեանէն

կազմուած է : Բայց ոչ տը գիտնալ թէ նա ա-
ռանձինն չ'սխտի գործէ, այլ Վարչութեան
հետ համխորհուող, որ դնաւորական տրոյց
յաւելման սկզբան համակարծիք լինելով, կար-
ծեաց փոխանակութիւն մը սխտի յառաջ գալ,
որով կամ մենք զՎարչութեանն պիտի համա-
ղեմք, կամ Ինքն զմեզ : Ես, որ տրոյց բարդ-
ման սկզբան զգեմ եմ բացարձակապէս, կըր-
նայ ըլլալ որ խնդիրն աւելի մասնայ ուսումնա-
սիրելով, համոզուիմ : Հետեւաբար սխալ է
Ձերազ իջնելով այն կարծիքն թէ Յանձնա-
ժողովն ընդգրկուողիւր կուսակցութեանէն կազմու-
ած է, որով խնդիրն միակողմանի կերպիւ
սխտի բնուի :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՅ — Ըստե-
ցաւ թէ Վարչութիւնն զմտաւորակամ տրոյց
յաւելման կուսակցի է : Սխալ է այդ են-
թադրութիւն : Ձեր Ազգային Վարչութիւնն
միակայն ազգին օգտին և շահուն կուսակցի է,
և երբ խնդիր մը կը բերէ Ժողովոյց սեղանին
վրայ, ինքն նախ կարծիք մը կը գոյացնէ և
խնդիրն յ'օգուտ ազգին ուսումնասիրելով կը
ներկայէ Ձեր ընդունելութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Պէր ու զէմ կարծիք-
ներն փոխանակուեցան որով և խնդիրն լու-
սաբանուեցաւ ըստ կարելոյն : Ժամ է արդ
որ ներկայացեալ առաջարկութիւնք ամփոփե-
լով Ձեր բռեւէին ենթարկեմ :

Ոմանք կ'առաջարկեն խնդրոյն նախադըն-
նութիւնն յանձնել նախորդ Քննիչ Յանձնա-
ժողովին որ Վարչութեան հետ համախորհուող
իւր տեղեկագիրն ներկայէ Ժողովոյց յառաջի-
կայ նստին, և այլք, սոյն խնդրոյն բնութեանն
համար մի նոր Յանձնաժողով կարգել կառա-
ջարկեն : Եթէ ուրիշ զխտողութիւն ունեցող
չ'կայ, սոյն երկու առաջարկներն քուէի կը
դնեմ :

Ոչ որ յ'երեսօթխանաց զխտողութիւն ըն-
լով, Ատենապետ Էջնելով բուէի կը դնէ մի-
ջեալ երկու առաջարկներն, և Ժողովն Վի գէմ

միաձայնութեամբ խնդրոյն բնութիւնն նախորդ
Յանձնաժողովոյ յանձնելու առաջարկն կ'ըն-
դրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Այժմ, ո՞վ որ առանց
հրաժարեալ երկու անդամոց տեղ նոր ընտրու-
թիւն կոտարելու, Յանձնաժողովոյ անդամոց
ն թիւն բաւ կը համարի, թող իւր հուանու-
թիւնն յայտնէ :

Ժողովն յի դէմ միաձայնութեամբ բաւ
կը համարի ֆնիչ Յանձնաժողովոյ անդամոց
ն թիւն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Իսկ ո՞վ որ կուզէ Վարչու-
թեան Ատենապետ Պէյի առաջարկութեան
համաձայն նիստն դադարեցնել, թող հաճի
իւր ձեռնածիղջ հուանութիւնն յայտնել :

ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԵՏ. — (Ատենապետ քաղ-
ժողովոյ) Երբ Վարչութիւնն կուզոյ առա-
ջարկել որ այս խնդրոյն համար ժողովոյ նիստն
դադարեցնելու անհնայ, կարծեմք այլ եւ խըն-
դիրն բռնել զնեւու հարկ չ'ընար :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ-ՊԵՏ. — (Ատե-
նապետ կրօնական ժողովոյ) Կրօնական ժո-
ղովն եւ համարաւ է դադարեցնելու նստն առա-
ջարկութեան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅՑ. — Թէև ես դա-
մակ նիստ ընելու դէմ եմ, բայց քանի որ մե-
նէ ընտրուել Վարչութիւնն այնպէս կուզէ,
զիմքն յարգած լինելու համար պէտք է ըն-
դունիլ դադարելի առաջարկութիւնն :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՅՑ. — Քուէի դրէ՛ք իմն-
դիրն, Ատենապետ էֆէնտի :

ԶՊՊԱՆԵԱՆ Մ. ԷՅՑ. — Եթէ բուկարիւ-
թեան արդիւնքն Վարչութեան առաջարկին
հակառակ ելնէ, ի՞նչ պիտի ընեմք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Խնդիրն պարզ է : Մեր
ներքին կանոնադիրն կը տրամադրէ որ 10 ե-
րեսիօտանոց գրաւոր խնդրանք կարելի է
դադարեցնել նիստ ընել, մինչդեռ այժմ 28 ե-
րեսիօտանք կան որ կը պահանջեն դադարեցնել
նիստն :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՅՑ. — Սխալ է, Ատե-
նապետ էֆէնտի : Կանոնադիրն կը տրամադրէ
որ, կրնան այդ տեսակ առաջարկ մը ներկայա-
ցնել, բայց ժողովն ազատ է մերժել կամ ըն-
դունիլ այդ առաջարկութիւնը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅՑ. — Ներքին կանոնա-
դիր 29րդ յօդուածն կըսէ, « Տասն անդամոց
& խնդրանք՝ որ համառօտ պատճառարանեալ
& պէտք է Ատենապետին ձեռքը տրուի, ձե-
& ռախարձով առանց վնասի ժողովը կ'որոշէ
& միթէ դադարեցնելու կուզէ » :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Կը տեսնէք որեմն ի՞նչ
ժողովն կրնայ տասն անդամոց խնդրանքը զը-
նդարեցնելու նստն որոշումն տալ :

Որեմն, ո՞վ որ ըստ առաջարկութեան
Աղբային Վարչութեան, յառջիկայ նիստն
դադարեցնելու կուզէ, թող իւր ձեռնածիղջ հա-
ւանութիւնն յայտնէ :

Եւ ժողովն կ'որոշէ յառաջիկայ նիստն ի՞նչ
դադարեցնելու :

Սոյն բուկարիութեան մէջ ձեռնարկ կը
ընայ Ատենապետ էֆէնտի ֆախալեան :

5.

Բողոքագիր Տրապիզոնի գաւառական
ժողովոյ ընդդէմ Կեդր. Վարչութեան յի
մասին Առաջնորդական ընտրութեան .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅՑ. — Տրապիզոնի Գաւա-
ռական ժողովոյն իրողանէ եւս զիր մը եկած

է Գիւանիս որ նոյնպէս կը վտւթամ հաղորդէ Ժաղովոյդ, Օրակարգի անցնելէ առաջ :

Ատենապետ էՖէնտիի հրահրանօք Ատենադպիր էՖէնտի կըմթեանու հետեւեալ զիրն :

Վսեմաշուք Ատենապետ էՖէնտի Ազգ. Պատկառելի Ընդհ. Ժողովոյ :

Լրագիրներէն տեղեկանալով թէ Կեդր. Վարչութիւնը առաջարկ մը ներկայած է Պատ. Ժողովոյդ, որով թափուր վիճակաց Առաջնորդներու ընտրութիւնը իրեն վերապահել կը փափաքի, և այս պատճառաւ իսկ յետածըգուած է Տրապիզոնի առաջնորդական ընտրելեաց ցանկին յղումը, վիճակիս Գաւ. Ժողովոյ անդամներէն 19 երեսփոխաններէ ստորագրեալ մի բողոքագիր մատուցուելով Առաջնորդական Տեղապահ Գեր. Ս. Հօր. Գաւ. Ժողովոյ անմիջական 'ի նիստ գումարումը խնդրուած, և Քաղ. Ժողովն ևս կարևոր դատելով բողոքարկուաց խնդիրը, որոշած էր Ժողովոյս անմիջական գումարումը :

Ուստի որոշմամբ Քաղ. Ժողովոյ և հրահրանօք Տեղապահ Ս. Հօր. Գաւ. Ժողովը իւր անդամոց մեծամասնութեամբ Յունիս 26, Երեքշաբթի օրը 'ի Ժամ 7, 'ի նիստ գումարուեցաւ, ուր կարգացուելով ծանուցեալ բողոքագիրը, Ժողովոյ ուշադրութեան ենթարկեցաւ Կեդրոնական Վարչութեան առ Պատ. Ժողովոյ ներկայացեալ յիշեալ առաջարկը :

Գաւ. Ժողովը յետ երկար վիճարանութեան, նկատելով որ Ազգ. Սահմանադրութեան Գաւ. հրահանգի 2. գլխոյն 1. յօդուածի տրամադրութեամբ ա-

ռաջնորդական ընտրութեան բացարձակ իրաւունքը Գաւ. Ժողովը կը վայելէ,

Նկատելով որ Տրապիզոն իւր այս իրաւունքէն զրկելու համար ո'ն է բանաւոր պատճառ մը չ'դտնուիր,

Նկատելով որ առաջնորդը թափուր մի քանի վիճակներու պէս, Տրապիզոնի վիճակին համար ո'ն է անձնական կամ այլ դժուարութիւններ, անտեղութիւններ չ'է կարելի վերադրել,

Եւ նկատելով մանաւանդ թէ Կեդր. Վարչութիւնը մեր առաջնորդական ընտրելեաց ցանկը յղելու որոշում տալէ վերջ, իւր վերջին առաջարկը բերած է Պատ. Ժողովոյդ,

Որոշեց բողոքել յիշեալ առաջարկի դէմ որ մեր սահմանադրական իրաւանց բռնարարումն է, և եթէ ուրիշ գաւառներու համար առժամեայ կարգադրութիւն մ'իսկ լինի, յ'անուն Տրապիզոնի այդ որոշում կամ կարգադրութիւն չ'ընդունիլ, և պահանջելով ընտրելեաց ցանկի ընդ հուպ յղումը, համաձայն օրինաց մեր ձեռամբ իսկ կատարել մեր Առաջնորդի ընտրութիւնը :

Արդ 'ի նկատառութիւն ներկայելով Գաւ. Ժողովոյ սոյն որոշում, հաւատամբ թէ անտես չ'առնուիր մեր Սահմանադրական իրաւունքը :

Որով մնամբ խնարհ յարգանօք ի դիմաց Գաւառ. Ժողովոյ

Ատենադպիր Ա. Շամբիկեան Ատենապետ Գ. Խանեստեան
27 Յունիս 1884 Տրապիզոն

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ որ տեղեկացար սոյն բողոքագրին պարունակութեան, ժողովոյդ կամքէն կտրեալ է Օրտակարգն անցնել զայն, ըստ որում Խառն ժողովոյ կողմանէ ներկայացեալ առաջնորդական խնդրոյն հետ առնչութիւն ունի, և կամ ուղղակի Վարչութեան յղել:

Տ. Վ. ՎՐԴ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ — Վարչութեան յղել կ'ատջարեմ:

Տ. Մ. ԵՊԻՍԿ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Արդէն ժողովոյս Օրակարգին մէջն է այն տեղեկագիրն որ կը վերաբերի Առաջնորդական խնդրոյն, և ես կը կարծեմ թէ այդ բողոքագրին եւս պէտք է կցել նոյն տեղեկագրին և վերապահել անոր վրայ վիճելիք վիճարանութիւն: Արդէն Վարչութիւնը սոյլ մասին ունի տալիք րացատրութիւններ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Տակաին Ազգային ժողովս այդ մասին ո և է կարգադրութեան մը չէ ձեռնարկած և ոչ իսկ իրրեւ խընդիր՝ ասոր վրայ բաւ մը արտասանած է, հետեւարոր Ազգային Վարչութիւնն այս տեսակ Սոհմանադրական խնդրոյ մը մասին չ'էր կարող ինքնին տնօրինութիւն մ'ընել: Ուստի կ'ատջարեմ ներկայացեալ սոյն բողոքագիրն ուղղակի Վարչութեան նկատմանն յանձնել:

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Ք. ԷՖ. — Ինձ այնպէս կը թուի այդ գրուածքին ոճն, առ Վարչութիւն ունեցած յարգանայ տխարքն չ'ներկայցնէր: Պէտք է որ ազգային ո և է պաշտօնական մարմին մը այս տեսակ յարաբերական խնդրոյ մէջ յարգանք և միտնգամայն պատկաւանք չարժի: Ուստի իմ կարծիքս է այդ գիրն վերադարձնել առ գրողս, որ բարեփոխելով այդ գրուածքին լեզուն ու ոճն, ըստ այնմ ներկայացնեն մեզ:

ԱՊԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ այս գիրն ուղղակի առնչութիւն ունեցած չ'ըլլար Առաջնորդական խնդրոյն հետ որ այժմ մեր Օրակարգին մէջն է և որոյ ստիպողականութիւնն հաստատուած, բնական էր որ անոր պարունակութիւնըն ժողովոյդ հաղորդելով, ըստ օրինի Վարչութեան նկատմանն յանձնուէր, բայց բանի որ Վարչութեան մեզ ներկայացեալ խնդրոյն հետ առնչութիւն ունի այն, ըստ է նոյն խընդրոյն նկատման վերապահել: Սակայն և այն, պէս ժողովդ աղաւ է այս մասին ուրիշ կարգադրութիւն մ'ընել միայն, Գիւսանս կը խընդրէ որ սոյն կէտին վրայ վիճարանութիւնն աւելի չ'ներկայի, զի առ այժմ չ'արժեք վիճարանել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — (Ընդմիջելով) Ինչպէս բիշ մը առաջ յայտնեցի, սոյս գիրն Վարչութեան պէտք է յղել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. ՂԱՐՈՍԵԱՆ Ի ԶԳՆՈՒՄ, խնդրեմ, թողք Ձեր Առնեսակետին շարունակել իւր խօսքն: (Շարունակելով) Ուրեմն ինչպէս որ յայտնեցի, խնդիրն միայն այս երկու կէտերուն վրայ կ'ըմբռնեմք, այսինքն կամ վերապահել մեր Օրակարգի երրորդ խնդրոյն նըկատման և կամ յղել ուղղակի Վարչութեան:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Վարչութիւնն այսօր առաջարկութիւն մը բերած է ժողովոյս որ ց'արդ վիճարանութեան չ'է ենթարկուած, և կրնայ ըլլալ որ նկատողութեան առնուելով ընդունելի կամ մերժելի այն, սակայն Գաւառ մը կայ որ իւր Սահմանադրական իրաւանց գործարկութիւնն կը պահանջէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. (Ընդմիջելով զԱտեճաբանն) Խնդրոյն մէջ մի մտնէք, կաղաչեմ:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Խնդրոյն վրայ է որ կը խօսիմ: (Շարունակելով) Լրագրայ

մէջ կարգայինք թէ Վարչութիւնն Առաջնորդական ընտրութեանց հրահանգներն զրկած է . . .

Տ. Վ. ՎՐԻ Տ. ՄԻՆԱՍԵԱՆ. — (Ընդմիջելով) Լրագիրներն պաշտօնական չ'են կրնար նկատուիլ :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Բայց ըսնի որտակաւին Վարչութեան առաջարկն այս ժողովն ս'ը ընդունուած և ոչ ալ մերժուած է : Ըսել է տիրող օրէնքն գործարութեան չէ դադարած . հետևաբար ըստ այսմ օրինաց' պէտք է որ Տրասպիրանի գաւառն իւր Սոհմանադրական իրաւունքն մնայելէ և Վարչութիւնն պարտուոր է առաջնորդական ընտրելեաց ցանկ զրկել անդ :

ԱՅՎԱՃԵԱՆ Կ. ԷՖ. — Բայց ի՞նչ հարկ կայ այդ տեսակ բացատրութեանց մէջ մտնելու :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ի՞նչ ըսել է . Սոհմանադրութեան այդ յօդուածն տակաւին չէ սրբազրկուած և դառա մը ըստ այնմ իւր իրաւունքն կը պահանջէ . ի՞նչ կը նշանակէ զրկել զիրն իւր այդ իրաւունքէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երկրորդ անգամ կ'աղաարբեմ Առնարան Էֆէնտին որ իրաւունք չունի այս պահուս խնդրոյն վրայ կարծիք յայտնելու :

ՄԱՏՈՒՆ Ս. ՊԷՏ. — (Ատեկապետ Քաղ. ժողովոյ) Այսօր Տրասպիրանի գաւառէն դէր մը եկած է Պատ. ժողովից որով կը բողբոքեն Կեդր. Վարչութեան դէմ, ուստի կրնար խնդիրն յըղել իրեն որ սրատրաստ է այդ մասին հարկ եղած բացատրութիւններն տալ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — Տրասպիրանի Գաւառական ժողովոյ կողմանէ բողբոք մը եկած է, սակայն որս' զէ՛մ և ի՞նչ մտածմամբ :

ՄԷԼԻՔԵԱՆ Էֆէնտին կրտէ թէ՛ Վարչութիւնն առաջնորդական ընտրութեան հրահանգ զրկած է 'ի գաւառս, լրագիրներնն րտելով այս տեղեկութիւններն, ըսել է թէ ինչ որ լրագրաց մէջ կը գրուի, հո՛ս արձագանք կը գտնէ . . . :

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — (Ընդմիջելով) Յայտարարեցիք թէ չ'կայ այդ տեսակ սրտում մը :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՏ. — Առմանակ է որ երբ Կեդր. Վարչութեան երկու ժողովոյ Առնարակեաց միանգամայն կը յայտարարեն թէ չ'կայ այդ տեսակ սրտում մը և ընտ. հրահանգ զրկուած չ'է, նորա սր ժողովն դուրս կը գտնուին, կըսեն թէ՛ կայ : — Գաղմ Տրասպիրանի խնդրոյն, խնչպէս միւս Վիճակներն, նոյնպէս և Ինքն պարտուոր էր ըստպատել որ նոյն Վարչութիւնն այս ժողովոյս մէջ բացատրեր իւր առաջարկութեան ոգին և պտոճատներն և երբ խնդիրն իւր վերջնական լուծումը գտներ, յայնժամ միայն իրաւունք կունենար խնդիր ներկայել ժողովոյց և այն խի համեստարար :

Ուստի կ'առաջարկեմ, որ սոս խնդրոյս վերայ տեղի ունեցած մի՛ճարանութիւնք չ'եղեալ համարուին և բողբոքողին յուր Վարչութեան, որպէս զի եթէ կան ուրիշ այս օրինակ զխտող զրկեր, ամենքն միասին բերէ Պատ. ժողովոյց :

Տ. Մ. ԵՊԻՍԿ. ԻՋՏԻՐԻԵԱՆ. — Ինչպէս ի՛նչ մ'առաջ յայտնեցի, պէտք է այդ գիրն վերապահել առաջնորդական խնդրոյն վրայ իրենիք մի՛ճարանութեան և յայնժամ միայն նըկատողութեան անուով զայն :

Իսկ գաղմ Գաւառական ժողովոյ բողբոքանոց, անիրաւ կը գտնեմ զայն, վասն զի Տրասպիրանից Կ'ըր ուղեցին Առաջնորդական ընտրելեաց ցանկ և զլացուեցաւ իրենց :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Գաւառական ժողովներն ինչպէս և թաղ. խորհուրդք չեն

կրնար յարտբերութեան մանեղ այս ժողովոյս հետ այլ վրայն Վարչութեան, հետեւաբար չ'է կարելի Օրակարգին մէջ դասել այդ խնդիրն : Մեր Օրակարգներն կամ ուղղակի Ս. Պատրիարքէն կամ Աղգային Վարչութեանն և կամ երեսօթիտանաց կողմանէ առաջարկութեան ձեւով մը կուզան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս գիրն առ Վարչութիւն յղելու առաջարկն բուէի պիտի զընեմ . . . :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Վարչութեան չ'իջրնար յընիւ Ատենապետ էֆէնտի: Իզմիրեան Սրբազանի առաջարկն է օրինաւոր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ Վարչութեան երկու ժողովոց Ատենապետք կտանաւ ջարհին որ խնդիրն ուղղակի իրենց յընիւ, Գլխունիս պարտքն է քուէի զնեղ այդ առաջարկն. մանաւանդ թէ Իզմիրեան Սրբազանի առաջարկն երկրորդը չ'ունեցաւ :

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — Ես կ'երկրորդեմ :

Գորդէն էֆէնտիի սոյն յայտարարութեան վրայ, Ատենապետ էֆէնտի բուէի կը զնէ նախ՝ սոյն բողոքագիրն առ Վարչութիւն յղելու առաջարկն, որ կըստանայ 19 քուէ, և ապա Իզմիրեան Սրբազանի առաջարկն որ կըստանայ 3 քուէ :

Հետեւաբար ժողովն 3 ի զէմ 19 քուէով ԿՈՐՈՇԷ Տրասիզոնի Գաւառական ժողովոյ Բողոքագիրն յղել առ Վարչութիւն 'ի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն :

(Յետ քուեարկութեան)

ՁԵՐԱԶ Ա. ԷՖ. — Կուզամ յիշեցնել Պատ. ժողովոյ թէ Առաջնորդական խնդրոյն առ

թիւ ասկից մի քանի ամիսներ առաջ Գեր. Սէֆէրեան Սրբազանի կողմանէ զբաւեր առաջարկութիւն մը ներկայացած էր հոս որ յԵՂՈւեցաւ Նախաձեռնութեան Գիւանն քննութեան և և նոյն Գիւանն իւր տեղեկագիրն բերելով անցաւ 'ի խնդրոց կարգ : Առտի կ'առաջարկեմ որ Վարչութեան կողմանէ մինչնոյն խնդրոյն վրայ ներկայացեալ տեղեկագիրն եւս յղուի նոյն Գիւանին որ իւր տեսութիւններն բերէ ժողովոյ մինչև յառաջիկայ նիստ, և ըստ այնմ խնդիրն ենթարկի վիճարանութեան :

ՓՈՒՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ այդ տեղեկագիրն ց'արդ չ'է դացած Նախաձեռնութեան Գիւանին, պէտք է որ երթայ :

ՅՈՐՈՍԵԱՆ Յ. ԷՖ. — Սրդէն Նախաձեռնութեան Գիւանն առաջնորդական խնդրոյն վրայ իւր կարծիքն յայտնած էր :

Հետեւաբար, ըստ առաջարկութեան Նախաձեռնութեան Գիւանի Ատենապետ Չերալ Մինաս Եֆէնտիի, ժողովն ԿՈՐՈՇԷ Վարչութեան Խառն ժողովոյ կողմանէ Առաջնորդական խնդրայ մասին առ Ինքն ներկայացեալ տեղեկագիրն յղել յիշեալ Գիւանին 'ի քննութիւն եւ 'ի տեղեկագրութիւն տասն և հինգ օրեայ պայմանաժամաւ :

ՄԻԶԱՂԷՊ

Տ. ՅԱԿՈՅ ՎՐԻ. Ա. ՓՈՒՓԱԶԵԱՆ. — Գըրեթիէ ամէն մը 'ի վեր է որ Միջադիւղի թաղէն երեսօթխանական ընտրութիւն մը կատարուած և տեղեկագիրն 'ի Պատրիարքարան ղրկուած է, սակայն կը դարձանամ որ նոյն տեղեկագիրն ց'արդ չ'է ներկայացուած ժողովոյս վաւերացման :

ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԵՅ. — (Առեմնայետ Քաղ. Ժողովոյ) Վարչութեան սեղանին վրայ այդ տեսակ տեղեկագիր մը ց'արդ չէ եկած: Արժ. Յակոբ Վարդապետ, որ այս հարցումն կընէ, ինքն ալ իրրեւ Վարչութեան անդամ կընար դիմել Պատրիարքարանի Գիւանատան եւ տեղեկութիւն առնուլ, փոխանակ ինչդիչն Պատ. Ժողովոյդ բերելու:

Տ. ՅԱԿՈՒՑ ՎՐԴ. ՓԱՓԱՋԵԱՆ. — Ես բընաւ պաշտօն եւ պարտականութիւն չունիմ Պատրիարքարանի Գիւանատան զիւելու, վաւրն զի իրրեւ Միջազրուի Ընտրողական Ժողովոյ Նախագահ կընեմ այս հարցումն ե ոչ իրրեւ կրօն. Ժողովոյ անդամ:

Տ. ՄԱՏՔԷՈՍ ԵՊՍ. ԻԶՄԵՐԼԵԱՆ. — Հար Սուրբն իրրեւ երեսփոխան կրնայ այդ տեսակ հարցում մ'ընել, ըսյց ոչ իրրեւ Ընտրողական Ժողովոյ Նախագահ:

Տ. ՅԱԿՈՒՑ ՎՐԴ. Ա. ՓԱՓԱՋԵԱՆ. — Իրրեւ Ընտրողական Ժողովոյ Նախագահ, պարտքս կատարելէ յետոյ, նաեւ իրր երեսփոխան կը հարցնեմ թէ՞ Միջազրուի թաղէն ընտրուել երեսփոխան Տաւատեան Ստեփան էֆէնտի ընտրութեան տեղեկագիրն ինչո՞ւ ց'արդ չէ ներկայացած Ժողովոյս:

ՄԱՔՍՈՒՏ Ս. ՊԵՅ. — Արդէն մի անգամ յայտնեցի թէ՞ Վարչութեան սեղանին վրայ տակուին այդ տեսակ տեղեկագիր մը չէ եկած:

Տ. ՅԱԿՈՒՑ ՎՐԴ. Ա. ՓԱՓԱՋԵԱՆ. — Ուրեմն Գիւանատունն է պատասխանատու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԵՅ. — Ժողովս այդ մասին բան մը չի կրնար ընել այս պահուս: Երբ որ ընտրութեան տեղեկագիրն ներկայանայ, հարկաւ յապաղման պատճառն կը բացատրուի:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ-ՊԵՅ. — Ես եւս կուգամ հարցնել Պատ. Գիւանտի թէ՞ ինչ պատճառաւ Պէկեան էֆէնտի երեսփոխանական խնդիրն ց'արդ իւր լուծուած չէ դատած:

ԱՏԵՆԱՊԵՏ ԵՅ. — Եթէ Նորին Գերապատուութիւնն ուշադրութեամբ աչքէ անջուցած ըլլար երրորդ նստի ատենադրութիւնն, պիտի տեսներ թէ՞ այդ խնդիրն, արդէն ըստ որոշման Ժողովոյ՝ անցած է մեր լայնըրոց կարդին մէջ եւ չէ կարելի առ այժմ անով զբաղիլ, մինչեւ որ ելմտացոյցի խնդիրն իւր վերջնական լծումն գտնէ եւ վաւերանայ:

Կը յուսամ թէ՞ ՚ի Գիւանէ տրուած սոյն բացատրութիւնը պիտի դո՛հացնէ զՆորին Գերապատուութիւն:

(Ձայս ատելով, Առեմնայետ Էֆէնտի տառն վայրկեանի համար կը դադարեցնէ նիտոն եւ պա վերտօին բանալով դայն, կ'անցնի Օրակարդի Բ. խնդրոյն, յայտնելով թէ՞ նախորդ նիտոնն առաջին խօսքն Տ. Վահան Վարդապետին է:)

Բ.

Շարունակութիւն վիճաբանութեան ՚ի վերայ Ազգային Կեդրոնական ելմտացոյցի

Տ. Վ. ՎՐԴ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ. — (Բեմն Ելմեիով) Ներկայացեալ ելմտացոյցին վրայ անցեալ նստին մէջ մի քանի զիտողութիւններ եղան, որոց կուզեմ պատասխանել:

Ա. Գաւառական այցելութեանց կարեւորութեան մասին իրրեւ փորձառու ոք՝ կարող եմ հաստատել թէ՞ այդ սէտքն կարի զարի է: 1879 ին երբ Ս. Պատրիարք Ջոր հրամանաւ այցելութեան ելանք ՚ի Գաւառս, ցաւօք տեսանք թէ՞ բազմաթիւ հայաբնակ զիւղեր բնաւ փարզապետի կամ բոնմանայի երես տեսած չ'ունին,

հետեւաբար ժողովուրդն հոգեւորապէս մխլեթարուելու պէտք ունի, եւ այս պէտքն զանազան տեսակէտներով այնքան զգալի եղած է, որ յատուկ տեղեկագրով մը ժամանակին բաղատութեամբ Ս. Պատրիարք Հօր, ուստի հարկ անհրաժեշտ է որ այս կենսական պիտոյից դոհացում տալու համար ներկայացեալ Ելմտացոյցին մէջ որոշ դումար մը սահմանուի :

Բ. Կը տեսնեմ թէ Կրօնական ժողովն եկեղեցականները պատրաստելու համար 300 ոսկոյ վարկ մը կուզայ խնդրել այսօր . բայց նախնի ժամանակներէ 'ի վեր եկեղեցական պատրաստելու հոգն Եպիսկոպոսաց վրայ զԸՐՈւած էր, սակայն դժբաղդաբար մեր այժմու Եպիսկոպոսուէնք եւ Պատրիարքուէնք ոչ մի հատ եկեղեցական պատրաստելու հետամուտ եղած են : Վանքերէն Էլնոզ վարդապետը ընդհան, րապէս զրական անձինք կը լինին, իսկ ընկերական կենաց մէջ ապրելու սահմանեալ եկեղեցականը պէտք է զարգանայ Եպիսկոպոսին ձեռաց ներքեւ : Այնպիսի ճմարտութիւն մ'է այս որ չէ կարելի անտես առնուլ : Եւ ես կը յայտարարեմ թէ Ներսէս Ս. Պատրիարք Հայրն իւր տանամտայ Պատրիարքական պաշտօնավարութեան միջոցին՝ մէկ հատ եկեղեցական իսկ չէ հասուցած, ինչպիսի եւ, Զմիւռնիոյ Առաջնորդ Մեթրիսեղեկ Եպիսկոպոս Մուրատեանց, որ կաթողիկոսական երկրորդ բանտիտա եղած է :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Ընդմիջելով) Ասենապետ Էֆէնտի, զգուշացուցէք Ասենաբան Հայր Սուրբն անձնական ակնարկութիւններ ընել :

ԶՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Դրամ գտնելու միջոցին վրայ խօսեցէք :

ԶԱՏՆԵՐ — Թողէ՛ք որ շարունակէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ Ասենաբան Հայրն

խնդրէն չեղով անձնական ակնարկութիւններ կընէ, բնական է որ սոյն օրինակ ընդմիջմանց եւս տեղի կուտայ, ուստի կը հրաւիրեմ զինքն մտնել 'ի խնդիր, եւ կը խնդրեմ Երեսփոխան էֆէնտիներէն չ'ընդմիջել զինքն :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Հոս եկեղեցւոյ բեմ չ'է այլ Երեսփոխանական ժողովատեղի եւ մեզ չ'վերաբերիր եպիսկոպոսաց եկեղեցական հասցնելու կամ չ'հասցնելու խընդիրն :

ՎԱՀԱՆ Վ. ՎՐԴ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ -- (Շարունակելով) Իսկ դառով Չերազ Էֆէնտի յայտնած այն կարծեաց թէ՛ Երուսաղիմայ պարտուց բարձման հանգանակութեան գործն երբ եկեղեցականայ յանձնուեցաւ, չ'յաջողեցաւ, սխալ է : Յանձնաժողովն բնաւ մեզ չ'զիմեց' եւ հանգանակութիւնն՝ որ ց'արդ եկեղեցականաց ձեռք կը կատարուէր, աշխարհականացնել ուղեւով, ապարդիւն թողուց զայն :

Գ. Գալով Կրօնական ժողովոյ 300 ոսկոյ վարկի առաջարկին, ես ալ իբրեւ Կրօնական ժողովոյ անդամ եւ իբրեւ Երեսփոխան կը կրկնեմ նոյն առաջարկն, եւ զիտէ՞ք ինչու համար — Այնպիսի պարագայներ կան, յորս Կրօնական ժողովն իւր տրամադրութեան ներքեւ դումարի մը կը կարօտի : Օրինակի աղաբաւ. — Եսնեայի մէջ քանի մը աղքատիկ Հայ ծնողաց զուակներ անկուէք կը մնան, Կրօնական ժողովն կը փութայ զրել Ս. Պատրիարքին եւ Նորին Արքայնութիւնն Տեսեալ Սորհուրդին եւ Սա իւր Գանձապետին, բայց զիտէք թէ առ 'ի չ'զոյէ դրամի, կարելի չեղաւ փոքրիկ դումար մը յատկացնել որպէս զի քահանայ մը ստարուի անդ եւ մկրտէ այդ Հայ մանուկներն :

ԶԱՅՆ ՄՐ. — Եթէ Զուլուխտան ալ Հայ մը ծնանի, հո՞ն ալ յատուկ մարդ զրկել պիտի ուզէք :

ՎԱՀԱՆ Վ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ — (Շարու-
նակելով) Այն պարզ օրինակն միայն յառաջ
բերելով ցոյց տալ կուղեմ թէ՛ կրօնական ժո-
ղովն լոկ բարոյական իշխանութիւն մը չէ՛ .
կան խիստ շատ պարագայներ , յորս դրամի
պէտքն կդգացուի , ուստի կարեւոր կը նկա-
տեմ որ Պատ. Ժողովը ընդունի սոյն 500 ոս-
կույ վարկի առաջարկն :

Տ. Մ. ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Եպիսկոպո-
սաց մասին Վահան վարդապետի գիտազու-
թեանց ունիմ շատ մը պատասխաններ , բայց
որովհետեւ այժմ խնդիրն ներկայացելաւ Եւլը-
տացոյցին վրայ է , ուստի ուրիշ առթի մը կը
վերապահեմ իմ պատասխաններս :

ԱՂԱԲԷԳԵԱՆ Մ. ԷՑ. — Ես էլ նոյնպէս :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՑ. — (Իեմն ելնելով) Ներ-
կայացելաւ Ելմտացոյցին վրայ նախորդ նստին
մէջ Պատ. Ատենաբանը շատ բան խօսեցան եւ
ես միայն պիտի յաւելում՝ ինչ որ կը կարծեմ
թէ նոքա թերի թողած են :

Աղբային Վարչութիւնն պատրաստեալ
Ելմտացոյցն մեզ ներկայացնելով , կը խնդրէ
Ժողովէս ստիպողութիւն տալ անոր եւ միւս
կողմանէ Պատ. Տնտեսական Խորհուրդն իւր
առ Քաղաքական Ժողովն մատուցած տեղեկա-
գրովն կ'յայտնէ թէ՛ ներկայ տարւոյ Մարտ
ամսոյ սկիզբէն գործադրութեան գրած է
զայն . ըսել է 1884—85 ի Ելմտացոյցն գործա-
դրութեան գրուելէ յետոյ անոր ստիպողու-
թիւն տալ կ'առաջարկուի :

ՋԱՅՆ ՄԸ. — Այդ գիտողութիւնը Արվա-
ճեան Էֆէնտին ըրաւ արդէն :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՑ. — (Շարունակելով) Չայս իր
պարզ գիտողութիւն մը ներկայացը-
նելով Ձեզ , կ'անցնիմ . յաւելո՞րուն Ելմը-

տացոյցին , կ'ըսեմ . — Նախ չեմ ընդունիր
Պատրիարքարանի պաշտօնէլց ամսականաց վը-
րայ առաջարկեալ զեղջն . երկրորդ , կը ըսզու-
քեմ եւ ընտէ չեմ ընդունիր որ Աղբային Վար-
չութիւնն Ելմտացոյց ներկայէ մեզ յ'որում Եը-
շանակեալ չ'ըլլայ իրական մի գումար յ'անուն
դաստիարակութեան , այլ լոկ Ենթադրական
գումար մը որ միայն դադափարաց աշխարհին
մէջ կարէ դոյութիւնն ունենալ եւ հետեւա-
պէս ոչինչ յարդիւնս անել : Այսպիսի Ելմտա-
ցոյց մը աղբային արժանապատուութեան ա-
րատաբեր կը համարիմ :

Մեր Պատ. պաշտօնակիցներէն մին բաւա-
կան զօրաւոր փաստերով ջանաց հաստատել
թէ՛ « նախ հաց եւ ապա զիբք պէտք է
մեզ » , եւ մի այլ երեսփոխան հաստատեց թէ՛
« նախ զիբք եւ ապա հաց , կամ երկուքն մի-
ասին պարտին ըլլալ » :

Սահմանադրութիւնն իւր հիմնական ըս-
կըբանց երրորդ յօդուածովն պարտք գրած է
մեր վրայ , ազգային բարոյական , մտաւորա-
կան եւ նկարակամ պիտոյից հոգ տանիլ : Ա-
յո՛ւ , մեր Աղբն շատ պէտքեր ունի զորս հո-
ղալ պարտիմ , բայց այլ է պէտքն եւ այլ է
պարտքն : Արդ , Սահմանադրութիւնը պարտք
կը դնէ Աղբին բարոյական պիտոյից հոգ տա-
նիլ , սակայն Աղբն քան եւ չորս տարիներէ
ի վեր սոյն պիտոյից դո՛ւսցածն համար ի՛նչ
ըրած է — Այնինչ : Իսկ միւս կենսական պէտ-
քն , որ մեր յիշեալ պաշտօնակցին բացատրու-
թեամբ հացն է , հողացուած է ըստ բաւակա-
նին , վասն զի Վարչութիւնն Աղբային Հիւան-
դանոցի միջոցաւ այդ նիւթական պիտոյից դո-
հացում տուած է խնամելով հաղարաւոր ան-
կեաներ եւ կարտեաներ , եւ ինչ որ զըլա-
ցուած է , միփայն դաստիարակութեան համար
է : Թէ որքա՛ն զգալի է դաստիարակութեան
կարեւորութեան պէտքն , այժմ աւելորդ կը
համարիմ խօսիլ երկարօրէն , մանաւանջ որ
ուրիշ Պատ. Երեսփոխան մը դրապէս հաստա-
տեց անոր օգուտներն : Ձիլտեմ սակայն թէ

այն Պատ. Երեսփոխանն որ այժմ հակառակն կը պնդէ, այսպէ՞ս կը մտածեր ատեն մ'ալ էրը Ուսումնական Խորհրդոյ անդամ էր, եւ այսպէ՞ս կը մտածեր՝ երբ Միացեալ Ընկերու- թեանց Պետն էր . . . :

ԶԵՐԱՋ Մ. ԷՅ. — (Ընդմիջելով զԱտեճա- քանն) Քիչ վերջն պիտի պատասխանեմ :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՅ. — (Շարունակելով) Քիչ մ'առաջ կ'ըսէի թէ՛ Ազգն իւր կարօտե- լոց եւ այլ պիտոյից համար ըստ կարի կը վը- ճարէ իւր պարտքն . . . :

Տ. ԵՂԻՇԷՆ ՎՐԴ. ԱՅՎԱՋԵԱՆ. — (Ընդմի- ջելով) Բայց ո՛չ ելմտացոյցով :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՅ. — (պատասխանելով) Այո՛, ելմտացոյցով, վասն զի կը տեսնէք թէ շիւսանդանոցի յատկացեալ գումարն որոշ նը- շանակուած է ելմտացոյցին մէջ եւ միմիայն դատարարկութեան յատկացեալ գումարն զանց առնուած է : (կը շարունակէ) Այժմ կրօնական ժողովն 500 ոսկոյ վարկ մը կը պահանջէ դաւառական այցելու հովուութեանց եւ կղերականաց դատարարկութեանն հա- մար, եւ Ատենապետ Սրբազանն նոյն ժողո- վոյ, նախորդ նստին մէջ ազգու կերպով պաշտ- պանեց առաջարկեալ այդ գումարին ստի- պողականութեան վրայ : Բայց թո՛նջ ընեմք, պատրանաց մատնիմք զմեզ յ'անուն դաս- տիարարկութեան՝ յառաջագոյն քուէարկեալ 500 ոսկոյ վրայ անուանական գումար մ'ալ քուէարկելով, առանց զայն հայթայթելու միջոցները խորհելու :

Այս պէտքն լրացնելու միակ միջոցն է ազգային տրոց հաւաքումը կանոնաւոր վիճա- կի մը մէջ զնել : Երբ մեծատուն մը ազգին զորամ կը նուիրէ, այդ իւր առաքինական պարտականութիւնն է, եւ Սահմանադրական պարտականութիւնն է որոց վճարումը, եւ

միթէ մենք դատապարտեա՞լ պլտը է լինիմք յոյժ սակաւաթիւ առաքլինի մեծատուններէ սպասել մեր ոգուսն :

Անցեալ նստի ատենաբաններէն ճանըմ- եան էֆէնտի շատ իմաստուն միջոց մ'ա- ռաջարկեց, այն է թղթհարակ մը հնարել որ ամեն ազգային պաշտօնատունէ ելնող գրու- թեանց վրայ պարտաւորիչ լինի եւ հատոյթն յատկացնել կեդրոնական ծախուց Գաստիա- րակութեան զլիսոյն : Կարելի է որ Թաղական Խորհուրդք եւս իրենց հաստատուն եկամտից 0/0 5ը Պատրիարքարանի տան եւ կ'ունենանք հինգ հարիւր ոսկոյ բաղձացեալ գումարներն : Մենք որ սահմանադրական ժողովուրդ մ'ենք եւ մեր մէջ ունիմք քիչ շատ զարգացեալ տարերքներ, մեր զուական դատարարակու- թեանն համար պարտական ե՞մք միշտ մեծա- տանց ողորմութեան զիմել :

Այս մտածածմա ուրեմն, պատրաստած եմ հետեւեալ առաջարկն յ'անուն դաստիա- րակութեան, զոր կը ներկայեմ Ձեզ :

« Ազգային ժողովն կ'որոշէ 1884-85 ել- « մրտական տարւոյն համար, ազգային արկ- « զի հաստատուն եկամուտներէն 500 ոսկոյ « գումար մի յատկացնել Գաւառական այցե- « լու հովուութեանց եւ ազգային դաստիա- « րակութեան ծախուց ի նպաստ :

« Եւ, ընդունելով կրթական ընդհանուր « տրոց սկզբունքն, կ'ընտրէ մի Յանձնաժո- « ղով, որ պաշտօն ունենայ ուսումնասիրել, « գտնել այնպիսի միջոցներ որովք հնար լինի « ազգային դաստիարակութեան գործն ընդ « միշտ սպահովել՝ ազգային հանրական պար- « տաւորիչ տրովք, որպէս վայել է սահմա- « նադրական ազգաց :

« Յանձնաժողովն կրթական Օրինաց ծրա- « գիրն ընդ հուպ պիտի բերէ Ազգային ժո- « ղովոյ ի վաւերացումն » :

« Յ. Գուրգեն »

(Յեք ընթերցան)

ԳՈՐԳԵՆ. Յ. ԷՖ. — (չարումակելով)

Եթէ ընդունուելով այս առաջարկս թործադրութեան զրուի, յայնժամ իրրեւ սահմանադրական ժողովուրդը, անկախ մեր մեծատուններէն, պիտի յատկացնեմք մեր աշխատութեամբ գումարներ Եւրոպացոյցին մէջ, յ'անուն Գաստիարակութեան եւ Գաւառական այցելութեանց, որք պատիւ պիտի բերեն մեզ եւ չ'պիտի ունենամք այն կարգի գումարներ որք միայն գաղափարաց աշխարհի մէջ կրնան գոյութիւն ունենալ:

Անցեալ օր, ինչոյէս կարդացի ազգային թերթի մը մէջ, Անգլոյ հասարակաց կրթութեան Նախարարն յայտարարել է թէ ռամեւեհէն շահաւոր գումարներն են այն ծախքեր « զորս կը յատկացնեմք հանրային կրթութեան »:

Ահա Տեարք երեսփոխանք, իմ խորհրդը դաժուլեանցս ամբողջ եզրակացութիւնն, զոր Ձեր խորին ուշադրութեան եւ իմաստութեան կը յանձնեմ:

ՅԵՐՍԱ. Մ. ԷՖ. — (Բեմն ելնելով) Ազնիւ Երեսփոխաններ. — Ըստ խոստմանս, կուգամ պատասխանել այն դանազան ատենարաններուն որք Համարակալութեան Դիւանի տեղեկագիրներուն առթիւ մեր ըրած բանախօսութիւնը հերքել փորձեցին վերջնութեք, նախորդ եւ ներկայ նիստերուն մէջ: Անոնք մեր փաստերուն մեծ մասն առանց պատասխանի թողուցին. այլ մենք չը պիտի հետեւինք իրենց օրինակին եւ մի առ մի պիտի քննենք իրենց բոլոր առարկութիւններն:

Կը ցաւիմ որ նախորդ Համարակալութեան զիւանի Տեղեկարբ Թորգոսեան էֆէնտին երեք նիստերէ ի վեր բացակայ կը մնայ յաւէտ կամ նուազ բանաւոր պատճառներով, կը ցաւիմ նաեւ որ բացակայ է այսօր նոյն Դիւանի Ատենայետը Ալեքսանեան էֆէնտին,

որ անցեալ նստին մէջ յարոյց անձնական խնդիր մը ուժ կ'ուզեմ պատասխանել նախ: Ալեքսանեան էֆէնտին, յայտարարելէ յետոյ թէ զմեզ ազգին Մեհնորը կը կարծէ եղեր, ցաւ յայտնեց որ, փոխանակ գովելու այն Տեղեկագիրներն որք դատարակութեան դատը պաշտպանած էին, կուսակցական ոգի նւմարած ենք անոնց մէջ: Մենք որ այդ Տեղեկագիրներու մեծ մասին իրաւունք տուինք մեր բանախօսութեան մէջ, կը գովենք ամեն խանդ որ ցոյց կը արուի ի նպաստ դատարակութեան. այլ ինչ որ դատապարտեցինք եւ պիտի դատապարտենք յարիտեան, սա է թէ այդ նուիրական խնդիրը կը գործածեն ոմանք իբր կուսակցական զէնք մը, որով կը տկարանայ այն: Ինչ որ չ'ենք կարող ներել Համարակալութեան զիւանին եւ իւր կուսակցաց, սա է թէ կը յանդգնին չկտտել զիրենք իբր միակ բարեւոր ազգային կրթութեան եւ Պատրիարքը, Ապրտիւնը եւ Երեսփոխանական մեծամասնութիւնն իբր անտարբեր եւ ակարեւորութիւնը ժխտող: Հոս է ահա կուսակցական ոգին, զի չը կայ այսօր Հայոց ազգին մէջ երկխայ մ'անգամ որ ուսման կարեւորութիւնը ժխտէ: Փախաղան էֆէնտին աւելորդ նեղութիւն մը յանձն առաւ երկարօրէն քարոզելով մեզ ինչ որ ծանօթ է յետին մանուկին իսկ, զի առաջին կրթութեան նիւթը, զոր դասատուն կուտայ հայ ուսանողին, դատարակութեան կարեւորութիւնն է. «Արմենակ, կ'ըսէ վարժապետը, գոն բան մը գրէ ուսման օգուտներուն վրայ», եւ տղան չը վարանիր գրել այս աշխարհածանօթ խնդրոյն վրայ: Այսօր չը կայ ազգին մէջ տղէտ գործաւոր մ'իսկ որ, եթէ աղջիկ մ'ունենայ, չը ցանկոյ դնել զայն համբաւաւոր վարժարան մը, եւ, եթէ մանչ մ'ունենայ, Պերպէրեան վարժարանն կամ ուրիշ այսպիսի բարձր կրթարաններ. եթէ չ'իրազ զորք իւր փախաք, սրտաճոր սա է որ Հարի եղած գումարը կը պակսի իրեն: Այսոյէս է Պատրիարքաւանի համար

այլ. Նա քաջ զիտէ կրթութեան պէտքն, այլ, աղքատ գործաւորին պէս, զրամի պակասութիւնն է որ կը կաշկանդէ իւր բազուկները: Պատրիարքարանն այնքան պէտք չունի այս մասին ճառեր լսելու որքան ես, որ դաստիարակութեամբ կը զբաղիմ 13 ամեայ հասակէս ի վեր եւ պէտք չ'ունիմ դաստիարակութեան կարեւորութիւնն իմանալ Ալեքսանեան էֆէնտիէն:

Փափագեան էֆէնտին թուեց հին եւ նոր Եւրոպացիներուն տարբերութիւնն: Ես ալ թուած էի երկու Տնտեսական Խորհրդոց միջեւ եղած այդ տարբերութիւններն, զորս մինչեւ իսկ առաջարկած էի Մասնախումբի մը միջոցաւ յննել: Սակայն մեր վերջին նըստին մէջ Զօպանեան էֆէնտիի կողմէ տրուած բացատրութիւնք համոզեցին զիս, եւ, ալ չհարկ չը տեսնելով Մասնախումբի, նոյնութեամբ կ'ընդունիմ Եւրոպացոյն: Եթէ Համարակալութեան Դիւանը, Կանոնադրի 12-րդ յօդուածի ոգւոյն համեմատ, բացատրութիւն խնդրած լինէր Տնտեսական Խորհուրդէն եւ սպա յօրինէր իւր Տեղեկագիրներն, շատ հաւանական է որ ասոնք այնքան միակողմանի չը լինէին եւ Զօպանեան էֆէնտին համոզէր զայն որպէս համապէս զիս, որով յուզման պատճառ մը պիտի պակսէր: Տնտեսական Խորհրդոյ Ատենադպիրը յայտարարեց թէ Եւրոպացոյի թուանշաններն ծախուց իրականութեանը վրայ հիմնուած են եւ թէ տեսնուած տարբերութիւնն արդիւնք է առհարկի ձեռք առնուած խնայողութեանց: Ո՞վ չը մտնէր թէ, երբ չբարբութիւնն ստիպէ, կարելի է խնայողութիւններ ընելով զրկանաց ենթարկուիլ. անոնք իսկ, որք արդէն աղքատօրէն կ'ապրին, դեռ կրնան խնայողութիւններ ընել, մինչեւ Դիտլինի ատիճանն իջնելու համար: Եւ միթէ արդար է Համարակալութեան զիւանի եւ Փափագեան էֆէնտիի ընթացքին հետեւելով ըսել այդ անձեւրուն. « Եթէ կրնայիք տակաւի մէջ բնակիլ, ինչո՞ւ չէք ըրած ց'արդ. իսկ եթէ այդ խնա-

յողութիւնը ձեր անհրաժեշտ պիտոյքներուն պիտի վնասէ, ինչո՞ւ ժլատութիւն կ'ընէք: » Ահա երկայնարարութիւն մը զոր կարելի է գործածել Փափագեան էֆէնտիի կողմանէ եղած 20 0/0 զեղջի առաջարկին:

Մեր ընդդիմախօսն առարկեց թէ Պատրիարքարանի պաշտօնէութեան ամսական 13000 դրուչ յատկացնելու որոշումը փոխուեցաւ 1877է ի վեր: Այո՛, պէտք էր որ ժողովոցս որոշումն ենթարկուէին այդ փոքր փոփոխմունք. այլ նախօրէ Վարչութիւնը կրնայ առարկել թէ իւր գլխաւոր անասնաբուծութեան տակ գործադրած է զանոնք, զգուրով անոնց ստիպողականութիւնն եւ մանաւանդ տեսնելով թէ իւր բերած առաջարկութեանց բըննութիւնը կը յետաձգուէր ժողովոցս կողմէ, ինչպէս յետաձգուեցաւ Իփէքճեան Կրթական Ծրագրի վաւերացումն 1881 է ի վեր: 1882 Սեպտեմբեր 23ի ատենագրութիւնը կը վկայէ թէ, երբ ամեն շարաթ գումարուիլ եւ այդ ծրուիրը բնէն առաջարկեցի, երեսօրինակ մը առաջին տեղում մերժած է առաջարկս ստբառելով. « Գալով ամեն Հինգշաբթի Նուտքուելու խնդրոյն, թէ եւ ամենքին ալ կը փոփոքիմք, սակայն մեր գրադումներն բնեցեալ: Ուստի Չերազ Մ. էֆէնտիի առաջարկին դէմ մերժում կ'առաջարկեմ: » Եւ դիտէ՞ք ով է այս երեսօրինակն. — Համարակալութեան Դիւանի կրքատեր Ատենապետ Մատթէոս էֆ. Ալիբանեան: Եւ միթէ այս պարագայն չ'ը յիշեցնէր մեզ Մատթէոս Աւետարանչի բառերն. « Կապեն րեօրն ծանուց « Նըս եւ դժուարակիրս եւ դնեն ի վերայ ուսոց « մարդկան, եւ մատար իւրեանց ոչ կտան « շարժել զնոսս, եւ դրամենայն զգործս իւր « եանց առնեն ի ցոյցս մարդկան: » Եթէ դարձեալ առարկուի թէ Պատրիարքական հրատարականք չէր ներքեր որ ժողովս ուրիշ խնդրով զբաղէր, սխտի պատասխանեմ թէ պտտրուակ մ'է այդ. Պատրիարքական հրատարականք չէ կարող մեր ազգային կեանքը կասեցնել: Ս. Պատրիարքը, առանձնաշնորհ-

մանց բազրիրին հետեւանօր, այժմ աւ հրա-
ժարեալ է . . .

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջելով) Սըր-
բազան Պատրիարքն այժմ հրաժարեալ չ'է :

ԶԵՐԱՋ Մ. ԷՖ. (Շարունակելով) Այժմ
ալ հրաժարեալ է ըսի, այլ ահա Եւմուտացոյցի
խնդրով կը զբաղինք երեք նիստերէ 'ի վեր :
Այսպէս ալ կրնայինք զբաղիլ կրթական ծրա-
զրի խնդրով, եթէ կամք ունենայինք. կամք
կընեմ, զի ցուելով զիտեցիլ թէ, վերջնութե-
ր նստին մէջ այդ խնդիրը յարուցանելէս յետոյ
խի, դատարարութեան պաշտպանութիւնն
իրենց մենաշնորհը եկատող Երեւոյթականներէն
ոչ ոք ձայնակցեցաւ ինձ կամ ու է ակնարկու-
թիւն մ' ըրաւ իրէքճեան ծրագրին, որ սա-
կայն, իբր դատարարութեան օրինադիրք,
զբաժանական խնդրէն աւելի անսովորական կերպով
ենթարկելի է օրէնադիր ժողովոյս խորհրդա-
ձուութեան : Ասիք զատ, ամսական 15,000 ի-
մասին խնդիր հանեն խի աւելորդ կը թուի-
նձ, զի արդի Տնտեսական Խորհուրդը ճիշդ
այդ գումարը նշանակած է Եւմուտացոյցին մէջ
և արդար չ'է խարազանել զայն իւր նախոր-
դաց համար, Պրուտարքոսի Ամենիտո դատա-
տունին սէս որ, օրինակ տալու համար խրա-
շակերտաց որք օր մը որկրամուտութիւն ըրած
էին, անոնց առջեւ ծեծեց խր որդին որ սա-
կայն բան չ'էր կերած :

Մեր ընդդիմարանն աւարկեց թէ Տրոյ
Կանոնադիրը չ'է գործադրուած 1879 է 'ի վեր :
Քործադրութեան սկզբնաւորութիւն մ' եղած է
թէնէ, այլ ես ալ յայտարարած էի թէ չ'էր
կրցած գործադրուիլ, զուցէ անգործադրելու-
թեանն համար . սուր աւելի համազուեցոյ
տեսնելով թէ Համարակալութեան Դիւանը
կ'առաջարկէ որոց հաւաքումը թողականնե-
րէն յանձնել Քահանայից իրրեւ վերջին միջոյ,
որ զօրաւորագոյն միջոցը լինելու առջ տկա-
րագոյնը կը թուի ինձ, զի ո՞վ 'լը հաւատոյ

թէ զոր օրինակ Բէրայի Թաղ Խորհուրդ, որ
Մանուկեանի, Կիւմլիշէրտանի, Եսսեանի
և Նուրեանի սէս աղջեցիք անդամներ ունի,
չը կատարած գանձումը Ս. Յարութեան պոն-
դուխտ Տէրտէրը սխտի կորենայ կատարել
կամ, ըստ վաշան վարդապետի, պարզ արե-
ղայ մը : Նոյն Դիւանը հարկ կը դատէ որ աը-
րոյ հաւաքման մասին զտնդող և անխոց
Թաղականաց դէժ խոտութիւն կամ պատժա-
կան անօրինութիւն լինի, կարծեմ թէ շատ
կ'անպարտէ, և կը մտնայ թէ, ոչ թէ մեզ
սէս հպատակ աղբ մը որ լոկ բարոյական մի-
ջոցներու կրնայ յետուի, այլ մինչև իսկ Սու-
մանեան Կառավարութիւնը չը խտտանք տը-
րոյ մասին Մայրաքաղաքիս րնակիչներուն վը-
րոյ : Այդպիսի քաղաքականութիւն մը վտան-
գալից կը թուի ինձ, զի ի՞նչ սխտի լինի ե-
թէ Կեդրունը ձեռնարկէ պատժել Թաղական
Խորհուրդ մը, զոր Թաղեցիք պաշտպանելու
ենեն, արդէն խտուութիւնն անպակաս է Կեդ-
րունին մէջ, և անվերջ խտուութիւնները պի-
տի ծաղկին Կեդրունին և թաղերուն միջեւ .
ներքին բարեկարգութիւն հաստատելու տեղ
ներքին պտտեարգմ թէ ինչպէս այնպիսի երեսու-
խանք, որք Ազգային կեանքը բաւ սերտած
լինել կը կարծեն, դեռ չ'են կրցած ըմբռնել
թէ ոչ թէ Թաղական Խորհուրդ, այլ մինչև
խի ժամկոչ մը փոխել թաղ մը յեղափոխել է,
և թէ թաղեցոյց մեծամասնութիւնը Կեդրունին
հակառակ պաշտպան կանգնի այդ ժամկոչին :
Ասոր համար է որ Ներքին Պատրիարքէն պա-
հանջուած ներքին բարեկարգութիւնը կարծա-
տէն շատ աւելի դժուարին է, ոյնքան զբժ-
ուարին որ Կատանիչուարոյց առաջին Յովի-
կիմ Պատրիարքէն սխեալ ոչ մի Պատրիարք
կրցած է իրագործել զայն : Այս համոզմամբ
է որ առաջարկելի Որակարգն անցունել Ազ-
գային տրոյ խնդիրն, և գոհ եմ որ Արապու-
նի էֆէնտին և ուրիշ պատուարածան պաշտո-
նակիցք այս մասին ըրըք քննութեան մը հար-
կը զգային :

Մեր ընդդիմախօսն առարկեց թէ չէ գործադրուած 20 0/0 նպաստի որոշումն յօղուտ դաստիարակութեան և գումատական այցելութեանց և հովուութեանց, Գերջանէն զատ :

Կը պատասխանեմ թէ Գերջանին արուեր է իբր ամենէն աւելի կարօտեալ վիճակին, ինչպէս Ելմտացոյցին մէջ տեսայ որ Պատրիարքարանը նպաստի ամսական կը վճարէ աստ Պէպէքի և Պուրխաղի Բահանայից, որոց ամենէն աւելի կարօտեալ լինեն ստուգուած է : Փախաղեան է Էֆէնտի կը սխալի կարծելով թէ ոչինչ վճարուած է դաստիարակութեան համար, զի Կեղրոնական սնտուկը ամսական կը վճարէ մշտ Ռատմական Խորհրդոյ Գլխանադպրին և կը հոգայ Խորհրդոյ ընթացիկ ծախքերն, Կրթական Տեսուչ Հանգստեալ Ինիէքճեանին 200 սակ վճարած է, և Տնտեսական Խորհրդոյ վերջին հաշուեցոյցը կը յայտնէ թէ նա գումարներ նուիրած է նորընծայ Քաջանայից կրթութեան և Էթ-Մէյտանի դպրոցին համար : Կը տեսնէք թէ անոնց կարծածին չափ անտարբեր չ'է Պատրիարքարանն և ըստ կարի կը նպաստէ հովուական և կրթական սխտոյից : Չ'է կարող աւելին ընել, զի նա կրնայ հոգալ և կը հոգայ դպրոցաց հսկողութեան ծախքն, վճարելով այդ հսկողութիւնը կատարող Ռատմական Խորհրդոյ ընթացիկ ծախքերն կամ Գլխանադպրին թոշակը, այլ առայժմ անկարող է պահանջուածին չափ նպաստել Կեղրոնական վարժարանին : Առ այժմ կ'ըսեն, զի նոր Ելմտացոյցին մէջ դժուարագանձելի նշանակուած գումարն անգանձելի չ'է, բանի որ գանձելի նշանակուած 400,000 զրշի Կեղրոնական տուրքէն զատ՝ դժուարագանձելի նշանակուած 20,000 զրշ. կրցած է մասամբ կամ ամբողջապէս գանձել, նոյն խի ըստ վեկայութեան Համարակալութեան Գլխանին : Արդարեւ այս Գլխանն իբր առաջին տեղեկագիր 13 ա չ'էին կը վկայէ թէ կ-Յ ամէն ՚ի վեր կանխած Կեղրոնական արոց բանակութիւնն է 103,000 — 104,000 — 149,000 — 121,000, և

մեզ ներկայացեալ վերջին Հաշուեցոյցը կը զնէ 124,270 զրշ. ուրմն անցեալ տարի ոչ միայն դժուարագանձելի 20,000 կրցած է գանձուիլ, այլ մինչև խի 4,270 զրշ. աւելի հաւաքուած է. կը տեսնէք թէ խնդիրը երաշխարու տշխարհին մէջ թոշտող գումարի մը վրայ չ'է, ինչպէս կը կարծէ Գուրգէն Էֆէնտի, և թէ մանաւանդ կարելի է շջափելի նկատել այն գումարը որպէս կ'էսը կրթական և հովուական սխտոյից կ'ուզէ յատկացնել Տնտեսական Խորհուրդն . . .

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՏ. — (Առ Ատենապետն)
 Թող կուտա՞ք ինձ, Ատենապետ Էֆէնտի, հերբել Զերաղ Էֆէնտի վերջի խօսքերն :

ԱՏԵԱՊԵՏ ԷՏ. — Կը խնդրեմ որ չ'ընդմիջէք զԱտենարանն :

ՉԵՐԱՋ Մ. ԷՏ. — (Շարունակելով) Սա, անձըղելի հատոյթի մ'տոջէ, խոչնդութիւն ըրած է ապահովացոյն թիւը նշանակելով, և իբր սլարկեալ մարմին մը, չէ ուզած ազգը խորել մեծ բառերու առջեւ մեծ գումարներ զետեղելով և թուղթի վրայ համարարաններ հեմնելով, ինչպէս կ'ընեն ժողովրդականութեան թիկնածուներն : Փախաղեան Էֆէնտին ըսաւ թէ Ձեռնարդ Տնտեսական Խորհրդոյ Գ. Ելմտացոյցը, որ 1,250,000 զրշ. տարեկան ծախուոց գումար մը կը նշանակէր, այդ ահագին գումարին 1/10 է յատկացուցած էր այդ սխտոյից, և մնացեալ մէկ միլիոն զրշ. ծախուոց մանրամասնութիւններն կ'ապացուցանեն թէ Պատրիարքարանն որչա՞փ ի՞նչ կարեւորութիւն կուտայ այդ կենսական սխտոյից. Փախաղեան Էֆէնտին կամ կը սխալի կամ կը ստէ, թէ է չ'է մայելուչ այսպէս ըսել, բայց նոյն բառեր կը գործածեմ ակասոյց, Փախաղեան Էֆէնտի նախապէս նոյնը մեզ ըսած լինելուն համար, զի այդ Ելմտացոյցը նշանակած է Ազգային վարժարանոց նպաստ 76 000, Կեղրոնական վարժարան

ժողովին 120,000 և Գաւառական սպէշու-
թեանց 120,000, ընդ աւանն 316,000 զրուշ,
որ ընդհանուր գումարին $\frac{1}{10}$ Է չ'ըլլալէն դատ
 $\frac{1}{4}$ էն ալ պակաս է. նաև այդ անարգեալ
մանրամասնութեանց մէջ էն հանգստեան թօ-
շակի և կարօտեւոյ օգնութեան համար 24,000,
ժողովոյս Երևոյց Յանձնարարին 60,000, և
ուրիշ պիտանի ծախքեր: Ազգային առաջնու-
կարգ թերթ մ'ալ զրեց թէ Բ. Կելտաղոյցը
8,000 սակիւնոց էր և ոչինչ նշանակած էր այդ
պիտոյից համար, մինչ 4,000 սակիւնոց էր:
Եւ սոչայ այսպիսի սուտերով է որ կը վարձեն
ժողովուրդը և երեսփոխանութիւնը մուրրե-
ցընել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը հրախրեմ Ատե-
նաբան էֆէնտին զգուշանալ անձնական ակ-
նարկութիւններէ և միայն խնդրոյն վրայ խօ-
սիլ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Թո՛ղ խօսի, թող
խօսի, և ըստ արձանագրութիւն խր խօսքերը:

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — (չարուճակելով) Խո-
րէն Սրբազան և Փառաւորեան Էֆէնտի տաւ-
ջարկեցին թէ Կեղերնի պարտքն է Բաղէշի և
և ուրիշ գաւառաց վարդապետ և վարժապետ
հասցնել: Այո՛, ըստ Սահմանագրութեան 28րդ
դասակտն և, ըստ 43րդ յօդուածի, Ուսումնա-
կան Խորհրդոյ պաշտօնն է վարժապետ հաս-
ցընել: այլ ասոր պայմանն է Հիմնական
սկզբանց Բ. հատուածին գործադրութիւնն,
որ է. « Ազգայնոց պարտականութիւնն է՝
« Ազգային պիտոյից պահանջած ծախքերուն
« մասնակից ըլլալ Լեւոնաբանի իր կարողու-
« թեանցը չափովը, Ազգին խնդրած ծառայու-
« թեանցը յօժարակամ յանձնառու ըլլալ, և
« անոր ըրած անօրէնութեանցը սկիզբ չնա-
« զանդիլ: » քանի որ մասամբ կը կատարուի
« այս, միւսներն ալ մասամբ պիտի կատար-

ուին. երբ հասոյթը շտանոց, ծախքը պիտի
շտանոց, և ոչ թէ ընդհակառակն. իմաստուն
տնտեսութեան գործ է եկամուտին համեմատ
ծախքի գուժ բանալ, թէ՛ անհասաներու հա-
մար և թէ՛ մոնուսանդ մեզ պէս ազգերու
համար: Ես կ'ընդունիմ թէ Տնտեսական խոր-
հրդոյ պարտքն է հասոյթն անկցնել, այլ
Թող ընդդիմարանք ալ ընդունին թէ հասոյթը
չ'աճած պէտք չ'է ծախքը անկցնել: Ուստի,
առ այժմ Բաղէշ ստիպուած է Կոտանդնու-
պօլէն վարդապետ ուղերու տեղ իւր չորս
կողմի և մօտակոյ Մուշի և Վանի հարիւրա-
ւոր վանդերէն ուղել, զի վանք են զորոցք
վարդապետաց, և ուրիշ գաւառք ստիպուած
են ընել ինչ որ ըրած են ց'արդ. վարժապե-
տի պէտքն ալ կրնան ընուլ զխնելով փորձու-
ղապեան Կեղերնական վարժարանին, Երկաջի
Ընկերական Վարժարանին և ուրիշ գաւառա-
կան ընտիր կրթարանաց, որք հանած են և
կը հանեն ըսդ'աթիւ վարժապետներ, մանա-
ւանդ որ մեր հայրաւաւոր վարժապետաց մի
մասը և վարժապետաց շատերը գաւառացի են:

Փառաւորեան Էֆէնտին ստարկեց թէ 50,000
զրուշը չ'պիտի բաշխուի վարժարանաց, այլ
Կեղերնին մէջ վարժապետ և վարդապետ
պատրաստելու պիտի ծառայէ: Գիտեմ թէ
այդ է նպատակն, այլ ես Երուսաղէմի պար-
տոց առթիւ յարուցուած սկզբունքէ մը հե-
տեցուցի զայդ. սակէ զատ կրնայ տուր-
կուիլ թէ, քանի որ քաղաքակիրթ ազգաց
Երևոյցայցերուն հետեւելով կրթութեան հա-
մար գումար մը դնել կ'ուզուի մեր Երևո-
ցոյցին մէջ, այդ ազգերն կը նպատեն տե-
ղական և գաւառական կարօտ վարժարանաց.
Գերջան, որ Պատրիարքարանէն առաւ իւր
առաջնորդին ամսականն, կրնայ մի և նոյն ի-
րաւամբ իւր վարժապետին ամսականն ալ պա-
հանջել անկէ. ուրիշ կարօտ գաւառք ալ կըր-
նան ձեռք կարկառել, 50,000 զրուշի նպաստը
լսելով. նաև գաւառացիք, որոց մէջ սկսած է
զորանալ ինքնագլուխ գործելու ոգին, կրնան
պահանջել որ այդ գումարէն բաժին հանու

իրենց, որպէս զի իրենք զայն մի և նոյն նպատակին յատկացնեն ազատօրէն. զոր օրինակ Վասպուրական և Երզրա, որք տուրք կը վճարեն Կեղրմինն, կրնան առարկել թէ ժամավաճառութիւն է ստրտել որ կեղրմնը վարձապետ հասցնէ իրենց համար եւ կրնան պահանջել որ նպատակ գումարին մէկ մասն փորձագաւեան և Ընկերական վարժարանոց յանձնուի, որք կարող են անմիջապէս հասցընել տեղացոց հարկաւոր եղած վարժապետներն: Ընդունելով իսկ թէ ոչինչ տրուի գաւառաց, կը պատասխանեմ թէ, քանի որ 50,000ին կէսը գաւառական հովուութեանց պիտի յատկանայ, մնացած տարեկան 25,000 զրուս վարժապետանոցի եւ Կեղրմնոցի ստորին դասարանաց ալ չը բոււր. ամսական 19 ոսկին բաւական նպատակ մը չ'է ունենալու համար առաջնակարգ վարժապետանոց մը և Կեղրմնոց մը, զորս բաղձացեալ աստիճանին հասցնելու համար հարկ կ'ըլլայ Պատրիարքարանի ամբողջ հասոյթն անոնց յատկացնել և հետեւապէս գոցել Պատրիարքարանն. . . .

ԳՈՒՐԳԵՆ Յ. ԷՖ. — (Ընդմիջելով) Պատրիարքարանն գոցենք ըսող չը կայ: Պահ մը առաջ եւ իսկ էի ըսողը թէ՛ Պատրիարքարանի պաշտօնէից ամսականոց գեղջն անգամ չ'եմ ընդունիր:

ՅԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Որ սակայն հարկաւոր է յաջորդ տարին ալ նոյն հասոյթը կարենալ բերելու համար, զի իւր արդի կազմակերպութեամբ գէթ կը յաջող տարին 3,000 ոսկի դանձել: Ուրեմն Պատրիարքարանի անձուկ Ելմուսոցոցէն 25,000 զրչի անդաւական նպատակ տունելով, Պատրիարքարանը քանդած պիտի լինինք, և Եթէ Աղքը հետեւի ֆոֆաղեան Իջիճնոցի պահանջմանց, իրի տիկտէն ալ վարա եղած պիտի լինի: Ասկէ զատ, Հայ և օտար բարձր ուսուցիչներ հարկաւոր պիտի լինին Կեղր. վարժարանին հա-

մար. որ ուսուցիչ պիտի յօժարի պաշտօն վարել մի հաստատութեան մէջ որ կախում ունենայ Կեղր. սնտուկի անասոց վճարումներէն, և միթէ բոլոր աշխարհ չը գիտէ՞ թէ այդ սնտուկ մերթ անկարող կը լինի ստակ գտնել հեռագրի կամ թղթատարի համար իսկ: Այս հարաւոր, ձեր բանալիք Կեղրմնական վարժապետանոցը ուրիշ բան չը պիտի լինի այլ Կեղրմնական ազրատանոց:

Մեր ընդդիմարանն առարկեց թէ դանազան դպրոցներէ ելած ուսումնաւարաք, գործ չը գտնելով, վարժապետ եղած են, և թէ Միացեալ-Ընկերութեանց անդամներէ լսած է թէ իրենք վարժապետի սով կը կրեն, թէ և այս կէտ դուրս մնացած է ատենագրութենէն: Ուրեմն իրաւունք չ'ունէր զարմանալ թէ վարժապետը ուրիշ գործի կը հետամտին, քանի որ խօստովանած էր թէ գործ չը գտնելով վարժապետ եղած են: Սխալ է կարծել թէ դասատուի սով կայ. անթիւ և ձեւահաս դասատուներ ելած են, կ'եննեն և պիտի ելնեն մեր թաղական և մասնաւոր դպրոցներէ: Ռեթոս Պէրպէրեան Հասգիդի թաղական վարժարանին ելած է և ոչ վարժապետանոցէ, և ձեր բանալիք վարժապետանոցը շատ դիւրս չը պիտի կարենայ հանել այդպիսի ուսուցչապետներ. . . . :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Ընդմիջելով) Գաւի անգամ է որ բազմաթիւ վարժապետներ կը յիշէք և մէկ անուն միայն կը նշանակէք, զանէ՛ ուրիշ բանի մը անուններ ալ նշանակեցէք:

ՅԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Ազգային Կեղրմնը բժիշկ և փաստաբան ալ չը հասցոց, որոց կը կորօտին գաւառոցիք, այլ բաւ է որ այլք հասցոցնին և աղքը կը վայելէ Հայ բժիշկներ և փաստաբաններ: Կատանդնուսոյցիս ոչ սակաւ վարժապետներ և վարժուհիներ սփռած է դաւառաց մէջ, որք ունին

նաև տեղացի ընտիր դատտիրարակներ : Ոչ թէ Մխացեալ — Այկերու թեանց անդամներէ լսելով սյլ իրը այդ ուսումնատարած միութեան գործոն անդամ կը յայտարարեմ թէ մեր ընկերութիւնը , որ պարեանդէտով ապրեալն հարկին ենթարկուած է , մեծա մասամբ գաւառացի դաստառներով կը գործէ , և վարժապետէ աւելի ստակի սով ունի . եթէ կարենայ ճոխ ամսականներ վճարել , կրնայ գաւառները յղել մեծագոյն դաստիսաններն իսկ :

ՓԱՆՈՍԵԱՆ Կ. ԷՖ. — Մի թէ սարահանդէսն պարկեւտ միջոց է :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Գաւառներն հարկեր վարժապետ խնդրած են Ուսումնական Խորհուրդէն և չ'եմք կրնար գտնել :

ԶԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Չէ կարելի գտնել , երբ ուղուի սրանիւր-հացով վարձատրել զանոնք : Թող տան առատ ամսական , և նշանաւորագոյն ուսումնականներն գաւառները կը թափին : Ասիէ զատ , թող ներուսի ինձ յարել թէ , քիչ բացառութեամբ , գաւառացի դատտիրարակները կը թուին ինձ լինիլ նուազ միտիկատուն և նուազ թեթեւարարց քան Պոլսեցի դատտիրարակներն , որք ընդհանրապէս կը խրտչեցնեն գաւառական ժողովուրդըն կրօնական , բարոյական և յարաբերական անասակներով :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — Դո՛ւք ալ վարժապետ էք Ձերազ էֆէնտի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Թեթեւութիւնը Պոլսոյ մէջ մէկ գպրոցէ միայն կ'եղնէ :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐ-ՊԷՅ — Շատ հիշդ է :

(Ձերազ էֆէնտի կ'ուզի պատասխանել սոյն ընդմիջմանց.)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը յիշեցնեմ Ատենաբան էֆէնտիին թէ ընդմիջմանց սրատախանէլու պարտականութիւն չունի :

ԶԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Ուրեմն չը պատասխանելով անձնականութեանց , կը յարեմ թէ , երբ կրթական ծրագրի խընդիրը վերջապէս ներկայանայ մեր քննութեան , չը պիտի վարտնիմ կարծիրս յայտնել այն Պոլսական կրթութեան վրայ զոր կ'ուզէք ծուալել դաւառաց մէջ : Քանի որ այդ կրթութեան հիմն է Ֆառանքէնի ուսումն' առանց ազգային ըւրջ մշակութեան , մեր յղած վարժապետը պիտի կարենան գաւառաց մէջ Հոյերը բրդացումէ ազատել , այլ զանոնք Ֆառանսացման առաջնորդած պիտի լինին . Քուրդի կոկորդէն խուած Հոյը Ֆառանսացոյ կոկորդին կեր պիտի լինի . ո՛չ ապսքէն ամեն օր կը տեսնենք Ֆրանսաներէն հողիւ թոթովող Հոյեր որք Բարիկն իրենց նայտնիք կը նիստեն . Բերա , Իզիր և ուրիշ այսպիսի կեդրոններ լի են օտարացած Հայ գերբնաստաններով , և այս մտանգը մեր ազգային գոյութեան կըստանայ : Զգուշանանք յախուուն գործելէ և ազգը յազգելէ և վնասեցնելէ : Ոչինչ կայ բացարձակ , և Կեդրոնական վարժարանը պանակիս չ'է : Քաղաքակիրթ ազգերուն վարժապետանց ունենալը չը ստիպեր զմեզ որ մենք ալ ունենանք , եթէ մեր կարողութիւնը չը ներեր :

ԱՐԵԱԿՈՒՆԻ Յ. ԷՖ. — Սակայն երբ ունենալու կարող վիճակի մէջ լինիմք , պէտք է յայտնամ բանալք :

ԶԵՐԱՋ Մ. ԷՖ. — (Շարունակելով) Անոնք աստղաբաշխական դիտարան ալ ունին , և մի թէ պատճառ մ'է այդ որ մենք ալ նոյնը պահանջենք Պատրիարքարանէն , որ հազու կըրնայ իր սպրուստը ճարել :

ԳՈՒՐԳԷՆ Յ. ԷՖ. — (Վերստին ընդմիջե

լով) Նախ Սահմանադրութիւնն պատասեցէք
և ապա ըրէք այդ տեսակ յայտարարութիւն-
ներ :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — (Պատասխանելով) Սահմանադրութիւնը երեսուհի, պարտք
եւ իրաւունք : (շարունակելով) Նոյն իսկ այդ
ազնւոյ իրարմէ կը տարբերին էական խնդրոյ
մէջ. Զօանտա ունի ձեմարան մը իւր լեզուն
կանոնաւորելու համար, այլ Անկլիա ձեմարան
չ'ունի և սակայն ոչ նուազ կանոնաւոր է իւր
լեզուն : Մեծաշորուտ Անկլիան, որոյ կըր-
թական եղանակն ամենէն աւելի կը յորժարի
մեր ազգին, 1834 ին էր որ առաջին անգամ
իւր իշխանոցոյն բաժին հասնեց նախակրթու-
թեան, և Կրթական Նախարարութիւնն չ'ունե-
նալով 1839 ին կազմեց իւր առաջին Կրթա-
կան Խորհուրդը . գալով վարժապետանոցին,
Մեծն Բրիտանիա և Ամերիկայի Միացեալ-Նա-
ստանոցք վարժապետանոց չունէին մինչև 1840
և հազիւ կէ տարիէ 'ի վեր ունին վարժապե-
տանոցներ, զորս անհատք և ընկերութիւնք
հիմնած են մեծաւ մասամբ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Հայ ազգն
1830էն առաջ ալ դաստիարակութեան Տեսուչ
Խորհուրդներ ունէր : Ազգային կեանքը չը
գիտցողներն են որ այդպէս կ'ըսեն :

ԱՐԵԱԿ Յ. ԷՖ. (Ընդմիջելով) — Եթէ անոնք
40 տարիէ 'ի վեր վարժապետանոց ունին, մեր
ազգին բնաւ ամօթ չէ որ 400 տարիէն իսկ
ունենայ :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. (շարունակելով) — Այս
ոպսակս լինելով, չ'եմ' ներքեր որ վարժապե-
տանոցը պատրուակ բռնեն և անկարելին պա-
հանջեն ժողովուրդը Պատրիարքարանի դէմ
գրգռելու համար : Ամեն Հայ կը փափաքի որ
Պատրիարքարանը ոչ թէ 50,000, այլ 50,000,
000 զրուչ տայ դաստիարակութեան . այլ երբ

չ'ունի, ի՞նչպէս տայ . պարտք ընէ, թէ ան-
պարկեւտ միջոցներու դիմէ : Չ'եմ կարող նե-
րել որ աղբը վհատութեան մատնեն, հաւա-
տայնելով իրեն թէ պիտի կործանի եթէ չ'ու-
նենայ վարժապետանոց, զի մեր ազգը բա-
րոյական ոյժով միայն կանգուն մնացած է և
վարժապետանոցն առ այժմ անկարելութիւն
մ'է մեր Ելմտայոցոյն համար : Գալով Կղերա-
նոցին, նա ալ կրնայ սպասել Կեղերական
հասցիով աճմանն : Միթէ մեր հին և նոր ա-
կանաւոր վարդապետներն Կղերանոցո՞ք ելած
են ամբողջակէս . ո՞ր կղերանոցէն ելաւ Նեք-
սէս վարժապետեան : Եւ ի՞նչ ապահովութիւն
ունիք թէ ձեր բանալիք կղերանոցին առա-
կերտողը, վարդապետ պիտի լինին անպա-
ճառ : Դեռ այժխս առջեւ են Շահնազարեան
վարժարանի 10 դաստաղի ժառանգաւոր-
ներն, իրենց եկեղեցական վերարկունքով և
փակեղներով, որք սարկաւազի սաստիճան
աւտած և խստացած և ուխտած էին վարդա-
պետ լինել . Մայրաքաղաքս մէջ զարգացած
այդ երիտասարդք, 40 տարի ազգին հազը
ուտեղէ յետոյ, բայց 'ի միտն' աշխարհական ե-
ղան, և այսօր թաղութիւ զուկներու տէր են :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՈՍ. ՆԱՐ-ՊԷՅ. — Այն
տեսակ կրթութեան արդիւնք այդ կրնայ լինիլ :

ՓԱՓԱՅԵԱՆ Ս. ԷՖ. (Ընդմիջելով) — Երբ
այն տուն հարցուցի Ներսէս Սրբազանի թէ՛
ն՞ր են Շահնազարեան վարժարանի ժառան-
գաւոր աշակերտները, պատասխանեց թէ՛
« Ես հասուցի զանոնք բայց Խրիմեան Պատ-
րիարք ցրուեց » — Խրիմեան Սրբազանին հար-
ցուցի թէ ինչո՞ւ ցրուեցիք այդ աշակերտ-
ներն, պատասխանեց թէ՛ « գամենքն ալ ան-
կրօն տեսայ, ես ալ ցրուեցի » : Թէ՛ն կրօնա-
գիտութեան դատաւորներն Ներսէս Սրբազան
էր :

ԶԵՐԱԶ Մ. ԷՖ. — Ձեր յայտարարութիւ-

նը բաւական չէ՛ . պէտք է անգամ մ'ալ ներ-
սէս Արքայանին հարցնել և գործը երկու կող-
մէն լսելէ յետոյ վճռել :

ՁԱՅՆԵՐ. — Փակման ժամը հասած է .
չարունակութիւնը գալ նստին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. ԵՒ ԱՅԼ.Ք. — Ո՛չ,
ոչ . պէտք է որ շարունակէ և աւարտէ :

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Փակման ժամը հասած
ըլլալով, կը հրաւիրեմ Ատենաբանն էֆէնտին
իւր խօսքին շարունակութիւնն յաջորդ նստին
թողուլ, եթէ չի պիտի կարենայ մէկ քանի
վայրկեանի մէջ եղրակայութեան յանգիլ :

ՋԵՐԱԶ Մ. ԷՖ. — Խնդրոյն վրայ տակա-
ւին ըսելիքներ ունիմ, բայց հիմայ պիտի հաս-
նիմ ատենաբանութեան այն կէտին ուր ընդ-
հատելով՝ կարելի է շարունակութիւնը թո-
ղուլ յառաջիկայ նստին : (Աղմուկից մեջ շա-
րունակելով) Փոխանակ կղերանոցին սպասե-
լու, նախ պատրաստ վարդապետներն յղենք
գաւառներն, որք պաշտօնէ խոյս կուտան .
ինչ գիտնանք թէ նորերն ալ օգը կամ դրամը
չը պիտի պատրուակեն, իբր թէ կենսապա-
րար օք ծծելու կամ դանձ զիգելու համար
հրատեշտ սուսած լինէին աշխարհի : Միթէ
Կղերանոցէն ելնողներն աւելի գործօն պիտի
լինին բան արդի վարդապետներն, որք սա-
կացի կը մնան աստ :

(Ատենաբանն էֆէնտի ոստ կ'ընդհատէ
իւր խօսքն, յառաջիկայ նստին մէջ շարունա-
կելու պայմանու) :

Բացակայք

ԱՅՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովոյ վերջի նըս-
տէն Գ. Դ. և Ե. բացակայութիւնն ունեցող 19
ներակախանայ, ըստ որոշման ժողովոյ, ազգա-
րարութիւն եղած է, որոց 13 ը ներկայ
են այսօր, խի մնացեալ հինգ բացակայից ոչը
են՝

- Տ. Սահակ Քչյ. Տ. Սարգսեան
- Միհրան Էֆէնտի Ինճէեան
- Միհրան » Պահճէգորուլեան
- Տիգրան » Կիսմիչիկերտան
- Սենեքերիմ » Մանուկեան

յղեալ կոչնագրոց ստորագրութիւնքն տակա-
ւին մեր ձեռքն հասած չ'լինելով, Գիւանա ըստ
օրինի չէ կարող հրածարեցուցեալ յայտարարել
զնոսա, ուստի այս մասին լինելիք վերջնական
կարգադրութիւնն կը մնայ յաջորդ նստին :

Գ. Բացակայք.


Սոյն նստէն՝

- Նշան Էֆէնտի Այվազեան
- Վիչչէն » Օրմանեան
- Պողոս » Շիշմանեան
- Գառնիկ » Յովակիմեան
- Միհրան » Տէօբմեճեան
- Յովհաննէս » Նուբեան
- Մարգար » Գուլագորգեան
- Համբարձ. » Ալաճաճեան

Երրորդ բացակայութիւնն ունեցած լինելով,
Կ՝ՈՐՈՇՈՒԻ յառաջիկայ նստին համար ըստ օ-
րինի կոչնագիր յղել անոնց :

Ատենան կը վերնայ ժամ 5 ին, յաջորդ
նիստն 15 օրէն գումարելու որոշմամբ :

Ատենադպիր Ատենապետ
Յ. ԱՐՇԱԿՈՒՆԻ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ



Ն Ի Ս Տ Զ.

6 ՅՈՒԼԻՍ 1884

ԱՂԳՈՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵՂԵՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
ԵՆԴՆՅԱԿԱՆՔ

Ա. Վիճակ

- 1 Սիմէօն Եպս. Սէֆէրեան
- 2 Կարապետ Վ. Բաղրատունի Բ
- 3 Վահան Վրդ. Տ. Մինասեան
- 4 Կարապետ Քահ. Սէֆեան

Բ. Վիճակ

- 5 Խորէն Արքեպ. Կար-Պէյ
- 6 Մատթէոս Եպս. Իգմիրեան
- 7 Յովհաննէս Քահ. Մկրեան Բ Պ
- 8 Գրիգոր » ԱՏէմեան Բ Պ

Գ. Վիճակ

- 9 Յակոբ Վ. Ա. Փափաղեան
- 10 Խորէն Քահ. Փէչիլիանեան
- 11 Ոսկր Քահ. Օնանեան
- 12

Դ. Վիճակ

- 13 Եղիշէ » Այվազեան
- 14 Յովհաննէս Վ. Արշարունի
- 15 Սահակ Քահ. Տ. Սարգսեան Բ 6
- 16

Ե. Վիճակ

- 17 Յովսէփ Վարդ. Այվազեան Բ 2
- 18 Գարեգին » Թաթարեան Բ
- 19 Սուքիաս Քահ. Ստոփանեան Բ 2
- 20 Գարրիէլ » Խանճեան

- Բ Բացակայութիւն առաջին :
- 2 » երկրորդ :
- Պ » բանաւոր պատճառաւ :

ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
Ա. Վիճակ

- Գում-Գաբու, Կետիկ-Փաշա. Եւ Գում-Գաբուի ղուրս
- 21 Գրիգոր Պէրպէրեան
- 22 Կարապետ Աղարդմանեան
- 23 Բարթող Քիւրքճիպաշեան Բ
- 24 Գէորդ Ապտուլաշեան
- 25 Յ. Մէրեշիմ-Գուրի Բ Պ
- 26 Տիգրան Հիւնքեարպէլէնտ. Բ Պ
- 27 Աւետիս Սուրէնեան Բ Պ
- 28 Տօքթ. Այվազեան
- 29 Գէորդ Այվազեան Բ Պ
- 30 Յակոբ Եէմէնիճեան
- 31 Յակոբ Գուրգէն
- 32 Խաչիկ Կամարակեան
- 33 Միհրան Ինճեան Բ 6
- 34 Յովակիմ Անդրէասեան
- 35 Մարտիրոս Էքսէրճեան Բ 2
- 36 Մանուէլ Պէլիրեան Բ 2
- 37

Բ. Վիճակ
Պէտիկթաշ

- 38 Բարսեղ Հալաճեան
- 39 Յովհաննէս Քէրէտէճեան Բ
- 40 Մելքոն Պարոնիկեան
- 41 Լեւոն Քարամանեան Բ Պ
- 42 Մարտիկ Յրէնիկեան
- 43 Պողոս Էքսէրճեան Բ
- 44 Յակոբ Պօշնակեան
- Իսկիւտար Ս. Խաչ
- 45 Սիմէոն Յէլէկեան
- 46 Գարրիէլ Նորատունկեան

47 Գասպար Գասպարեան
48

Իսկիւտար Ս. Կարապետ

- 49 Միհրան Պահճէգափուր. Բ 6
- 50 Պողոս Թորղոմեան Բ Պ
- 51 Տրդատ Փափաղեան
- 52 Յակոբ Հանճեան Բ 2

Գ. Վիճակ
Գասարմ-Բաշա

- 53 Գասպար Չերազ Բերա
- 54 Գրիգոր Սէլիմիչէճեան Բ 2
- 55 Ղազար Հովուեան Բ
- 56 Յարութիւն Պէկեան
- 57 Նշան Պոյաճեան
- 58 Վիչէն Օրմանեան Բ 3
- 59 Սինքերիմ Մանուկեան Բ 5
- 60 ՀամարձուՄ Մազպուլե. Բ 3
- 61 Մանուկ Ասանեան Բ Պ
- 62 Տիգրան Կիւմրիչէրտան Բ 6

Միշազիդ

- 63 Տիգրան Եուսուֆեան
- 64 Մկրտիչ Գազանճեան Բ 2
- 65 Մկրտիչ Ճանրմեան Բ 3
- 66 Պողոս Երմանեան Բ Պ
- 67

Պէլլոգ Եւ Ղայաթիա

- 68 Մլքայէլ Մամիկոնեան Գ. Վիճակ
- Քուզկուհնուգ Եւ Իճատիք
- 69 Մկրտիչ Մէզպուրեան
- 70 Սիմոն Մազուտեան

Գատըզիւղ	ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՄՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Գանձիկ Յովակիմեան Բ 3	Կարից	121 Ստեփան ֆափաղեան
72 Կարապետ Հազարեան Բ 2	101 Սերոբէ Աղնաւորեան Քեօթափեա	Տիվրիկ
Նարլը-Գաբու	102 Աւետիս Թընկերեան	122 Նշան Գարաղաշ Բ
73 Միհրան Տէօբմէճեան Բ 3	Աղրիանուպօլիս	Զէյրուկ Եւ Մարաշ
Եհնի-Մանալլի Սամարիոյ	103 Յակոբ Պարոնեան Բ Պ	123
74	Նիկոմիդիա	Տրապիզօն
Թօփ-Գալուս	104 Կարապետ Ս.Իւթիւճեան Բ	124 Յարութիւն Չէքէզեան Բ 2
75	Ակն	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Եւ Ս.	105 Յակոբ Գորեան	125 Կարապետ Սէթեան
Աստուածածին	Ղարանիսար	Տիգրանակերտ
76	106 Կարապետ Երէջեան Բ 2	126 Միհրան Չօպանեան
Գուրու-Չեղմէ	Արաբկիբ	Վան
77 Կարապետ Սըվաճեան	107 Կարապետ Խաչիկեան	127 Մարկոս Աղաբէզեանց
Հիսար Եւ Պօյաճի-Գիւղ	Բաղէշ	Աղրամար
78	108 Արփիար Արփիարեան	128
Նոր-Գիւղ Եւ Սքեցիա	Պրուսա	Հալեպ Եւ Այնթապ
79	109 Քրիստոսաւր Ղազարոսեան	129
Պայատ	Եղոնկիա	Սեբաստիա
80 Մկրտիչ Կիւմրէճեան Բ	110 Կարապետ Կիւրճեան Բ Պ	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Ռէթէոս Թաղէոսեան Բ	Ամասիա	Ռուսճուգ
82 Ներսէս Երէջեան	111 Համբարձում Ալաճանեան Բ 2	131
Քարակեօմրիւկ	Բալու	Բաբերդ
83 Յովհաննէս Թորոսեան	112 Յովհաննէս Աղնաւորեան Բ Պ	132
84 Կարապետ ֆանոսեան	Եղեսիա	Զմշկածազ
Ե. Վիճակ	113 Յակոբ Իւթիւճեան Բ 2	133
Սամարիա	Մանճըլըլս	Գաղատիա
85 Յակոբ Արշակ	114	134
86 Սարգիս Աղաբէզեան Բ Պ	Հաճըն	Ատանա
87 Յովհաննէս Նուրեան Բ 3	115	135 Մինաս Չերազ
88 Ռուբէն Կիւմրէլիքերտան.	Երզնկա	Սղերդ
89 Գարեգին Պաղտատլեան Բ 6	116 Ռեթէոս Պէրպէրեան Բ	136 Մասթէոս Ալէքսանեան Բ
90 Գրիգոր Ղազարոսեան Բ 2	Թէրիտաղ	Եօզղատ
91	117 Տիգրան Գ. Սինանեան Բ Պ	137
92	Կեսարիա	Մալաթիա
93	118	138 Գէորգ Վարդանեան
94	Խարբերդ	Իզմիր
Խասզիւղ	119	139
95 Յովհաննէս Արշակունի	Պալքքեսիբ	Եգիպտոս
96 Ռուբէն Պուլիուրեան	120 Ստեփան Գօլջեան Բ 2	140 Աբրահամ Մուրատեան
97 Մարգար Գուլարսղոն Բ 3		
98 Յակոբ Խանտանեան Բ Պ		
99 Նիկողոս Թիւլայնտճեան Բ Պ		
100		

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՆԴՍՄԲ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Տ.	Խորէն	Արքեպս.	Նար—Պէյ	Ա. Արեւադէր
2.	»	Սիւնն	Եպս.	Սէֆէրեան	Բ. »
3.	»	Մաթթիոս	»	Իզմիրեան	
4.	»	Կարեղին	Վրդ.	Թաթարեան	
5.	»	Վահան	»	Տ. Մինասեան	Ա. Արեւադէր
6.	»	Տաճատ	»	Ոսկանեան	Բ. »
7.	»	Յակոբ	»	Ա. Փափաղեան	
8.	»	Յովհաննէս	»	Արշարունի	
9.	»	Յովհաննէս	Քհյ.	Մկրեան	
10.	»	Սահակ	»	Տ. Սարգսեան	
11.	»	Սուքիաս	»	Ստեփանեան	
12.	»	Գրիգոր	»	Աճէմեան	
13.	»	Խորէն	»	Փէհլիվանեան	
14.	»	Կարապետ	»	Սէթեան	

ԱՆԴՍՄԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

1.	Անուորեան	Յովհաննէս	Էֆէնտի	
2.	Այլաղեան	Տօք. Նշան	»	Բ. Արեւադէր
3.	Գլըճճըեան	Գէորգ	»	
4.	Թորոսեան	Յովհաննէս	»	Ա. Արեւադէր
5.	Խըղըրեան	Գրիգոր	»	
6.	Խօրասանճեան	Թովմաս	»	
7.	Հաղարեան	Կարապետ	»	
8.	Հայաճեան	Բարսեղ	»	Բ. Արեւադէր
9.	Մաքսուտեան	Սիմոն	Պէյ	Ա. »
10.	Մամիկոնեան	Միքայէլ	Էֆէնտի	
11.	Պապօեան	Պապի	»	
12.	Սթիմարսճեան	Գէորգ	»	
13.	Փէշտիմարճեան	Տօքթօր Տիգրան	»	
14.	Քիւրքճիլանլեան	Կարապետ	»	

ՊԵՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Օ Ր Ը Կ Ս Ր Գ

Ա. — Ատենական դրժողութիւնք .

1. — Աւանդական Ե. Նստի Ատենագրութեան ,

2. — Բացակայութիւնք .

3. — Հրատարակիր յերեւելիականութենէ Թ. Էֆէնտի Թիրեաքեանի .

4. — Պաշտօնագիր Ազգ. Վարչութեան Խառն Ժողովոյ յաղագս երուսաղիմայ պարտուց բարձման խնդրոյն .

5. — Բողոքագիր Տրանիզոնի Գու. Ժողովոյ ընդդէմ կեդր. Վարչութեան 'ի մասին Ասալնորդական ընտրութեան .

Մ Ի Ջ Ս Գ Է Գ

Բ. — Շարունակութիւն վիճարանութեան 'ի վերայ Ազգային կեդր. ելմբ. տացոյցի .

Գ. — Բացակայք .